

- ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1183 - 2 ղեկտեմբերի 2014թ.).....45
- * 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԽԱՂՈՂԻ ԵՎ ԳԻՆՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1184 - 9 ղեկտեմբերի 2014թ.).....49
- * «ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԿԱՏՕ-Ի ԿՈՂՄԻՑ ՂԵԿԱՎԱՐՎՈՂ ՈՉ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՍԲ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1185 - 16 ղեկտեմբերի 2014թ.).....53
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1186 - 16 ղեկտեմբերի 2014թ.)58
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1187 - 16 ղեկտեմբերի 2014թ.).....64
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋԱՐԳԱՅՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1188 - 16 ղեկտեմբերի 2014թ.)68
- * «ՄՈՒՍԱԼԵՆ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ՝ ՄՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 90-Ը ՀՈՂՎԱԾԻ 2-Ը ՄԱՍԻ 2-Ը ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1189 - 27 հունվար 2015թ.).....74
- * ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-Ի ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1190 - 10 փետրվարի 2015թ.).....86

*ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,
Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և
քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի դասախոս, Բ.Գ.Թ.*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Իրավաբանական գրականության մեջ «սահմանադրականություն» հասկացությունը չի ստացել լայն կիրառություն, սակայն մշտապես գտնվել է գիտական հետաքրքրությունների տիրույթում: Խորհրդային շրջանում այս հասկացությունը երկար ժամանակ կապվում էր արտերկրյա պետությունների հետ և ընկալվում էր որպես «օտարածին» մի երևույթ և միայն հետխորհրդային շրջանում «սահմանադրականություն» հասկացությունը սկսվեց կիրառվել բավականին լայնորեն՝ չնայած գլխավորապես հատուկ դրան նվիրված հետազոտություններում:

Իր ծագմամբ «սահմանադրականություն» հասկացությունը պարտական է ամերիկյան քաղաքական-իրավական մտքին: ԱՄՆ 1787 թվականին Սահմանադրության հիմնադիրները դրանով նշեցին ամրագրված սահմանադրության գերակայությունը օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ¹ և դրա երաշխավորման միջոց դիտարկեցին իշխանությունների բաժանումն ու հակակշռումը: Պետք է նկատել նաև, որ սահմանադրականության երաշխավորման տեսանկյունից բավականին լուրջ և արդյունավետ մոտեցում էին որդեգրել Ֆրանսիայում: Այսպես 1789 թվականի օգոստոսի 26-ին Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի 16-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն»: Կարելի է ասել, դեռևս 18-րդ դարում նշված հռչակագրով բարձրացվեց սահմանադրության իրական կամ ձևական բնույթ ունենալու խնդիրը, և դրա հետ պատճառահետևանք

¹ St' u Берман Г.Дж. Западная традиция права: эпоха формирования. Пер. с англ. М. 1994., էջ 370

քային կապի մեջ գտնվող սահմանադրականություն առկայության կամ բացակայության հարցը: Հետագայում իրավաբանական և այլ հետազոտություններում «սահմանադրականություն» հասկացությունը ստանում է առավել լայն նշանակություն, սկսվում կիրառվել տարբեր պետությունների հասարակական կառուցվածքի ժողովրդավարական բնութագրման համար²:

Իրավաբանական գրականություն մեջ մշակված չէ սահմանադրականության էության և հայեցակարգային զարգացման, ինչպես նաև կոնկրետ և սպառիչ հատկանիշներով բնութագրելու վերաբերյալ միասնական մոտեցում: Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել որոշակի ժամանակաշրջանում սահմանադրականության պատմությունը և դրա զարգացումները, սահմանադրականության հասկացության և էության վերաբերյալ մի շարք գիտնականների մոտեցումները, ինչպես նաև սահմանադրականության հասկացության հետ անմիջականորեն կապի մեջ գտնվող իրավական երևույթները և հետազոտության արդյունքների հիման վրա կներկայացնենք եզրահանգումներ:

Այսպես «XVII-XVIII դդ. բուրժուական սահմանադրականության պատմությունը» մենագրության հեղինակները դիտարկում են սահմանադրականությունը որպես տեսական ուսմունք, գաղափարական-քաղաքական շարժում և պետաիրավական պրակտիկա³: Նշված ժամանակաշրջանում ընդունված էր, որ «Սահմանադրականությունը, ամենից առաջ նշանակում է սահմանադրության առկայություն և երկրի քաղաքական կյանքի վրա դրա գործուն ազդեցություն, սահմանադրության (գրված կամ ոչ) գործող օրենսդրության համակարգում որպես հիմնական օրենքի գերակայող և որոշիչ դերի, սահմանադրական-իրավական նորմերով քաղաքական հարաբերությունների միջնորդվածություն, պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական կարգավորվածության, անհատի ազատությունների և իրավունքների սահմանադրական ճանաչման, պետության և քաղաքացու փոխհարաբերությունների իրավական բնույթի փաստը⁴»:

Մեկ այլ հետազոտության մեջ նվիրված XIX դարի բուրժուական սահմանադրականության տեսությանը և պրակտիկային, հեղինակները

² Տե՛ս Конституция в XXI веке: сравнительно-правовое исследование. Отв. Ред. В.Е. Чиркин, М., 2014, էջ 10

³ Տե՛ս История буржуазного конституционализма XVII-XVIII вв. / Ред. кол.: В. С. Нерсисянц, В. Г. Каленский, П. С. Грацианский. М., 1983, էջ 4

⁴ Նույն տեղում, էջ 5

ևս մեկնաբանում են սահմանադրականությունը որպես տեսական, գաղափարական-քաղաքական շարժման և պետական-իրավական գործնական արժեքի տեսանկյունից: «Սահմանադրականության, որպես քաղաքական-իրավական պրակտիկայի համար էական արժեք ունի և սահմանադրության առկայության և երկրի քաղաքական կյանքի վրա դրա գործուն ազդեցության փաստը, սահմանադրության իրական գործառնությունը, օրենսդրության համակարգում: Բացի դրանից սահմանադրականությունը ենթադրում է պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական-իրավական կարգավորում, պետության հետ անհատի փոխհարաբերություններում վերջինիս ազատությունների և իրավունքների սահմանադրական պաշտպանություն⁵»:

Բուրժուական սահմանադրականության վերաբերյալ հարկ ենք համարում նաև անդրադառնալ «Բուրժուական սահմանադրականության պրակտիկան» գրքի հեղինակների դիրքորոշմանը, ըստ որի՝ սահմանադրականություն հասկացությանը պետք է դասել այն ամենը, ինչը կապված է սահմանադրության հետ⁶: Ա.Ա. Միշինը և Գ.Վ. Բարաբաշևը, ևս կապելով սահմանադրականությունը սահմանադրության ստեղծման հետ, դիտարկում են այն որպես պետական կառավարում, սահմանադրությամբ սահմանափակված: Ըստ Բարաբաշևի և Միշինի «Առաջին բուրժուական սահմանադրություն, բառիս բուն իմաստով հանդիսացել են 1787թ. Ամերիկյանը և 1791թ. Ֆրանսիականը: Նույն դարաշրջանում ծագում և համակարգվում է սահմանադրականության հայեցակարգը, որը ընկալվում է որպես սահմանադրությամբ սահմանափակված կառավարում: Սահմանադրականության հայեցակարգը, որը ստացվել է բնական իրավունքի գաղափարներից, հանդիսանում է ավատական բռնապետության բուրժուական-դեմոկրատական հակաթեզ⁷»: Պետք է նկատել, որ ըստ նշված աշխատության, այդ շրջանի տեսաբանները զարգացնում էին այն մոտեցումը, որ սահմանադրությունը ոչ միայն սահմանափակում է պետական իշխանության սահմանները, այլ նաև հաստատում իշխանական գործառույթների իրականացման գործընթացները⁸:

Կարծում ենք, որ սահմանադրականության (սահմանադրական պետության, սահմանադրական կառավարման, սահմանադրական

⁵ Ст' у История буржуазного конституционализма XIXв., Под ред. В. С. Нерсесянца. М., 1986., էջ 3

⁶ Ст' у օրինակ. Практика буржуазного конституционализма. М., 1982

⁷ Ст' у Барабашев Г.В., Мишин А.А Государственное право буржуазных и развивающихся стран. М., 1989, էջ 67

⁸ Նույն տեղում էջ 84

օրինականության, իրավունքի գերակայության) գաղափարները հանդիսանում են պատմականորեն առաջընթացային, ինչպես հենց բուրժուական պետությունը և բուրժուական դեմոկրատիան: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հենց ամերիկյան և ֆրանսիական սահմանադրությունները, ըստ էության, առաջ քաշեցին իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը մինչ օրս ժամանակակից ժողովրդավարական պետություններում հանդիսանում է սահմանադրականության հաստատման կարևորագույն նախադրյալներից մեկը:

Մինևույն ժամանակ սահմանադրականության խորհրդային հետազոտողները երկար ժամանակ կապում էին դրա առարկան բացառապես բուրժուական պետության և իրավունքի, բուրժուական սահմանադրությունների հետ: Խորհրդային սահմանադրությունների, խորհրդային պետության և իրավունքի հետազոտության ժամանակ այդ հասկացությունը չէր կիրառվում: Իսկ խորհրդային իրավաբանական բառարաններում և հանրագիտարաններում «սահմանադրական» բառը նույնիսկ չէր հիշատակվում⁹: Տվյալ խնդրի վերաբերյալ ծավալուն հետազոտություններ իրականացրած իրավագետներից Ի.Ս. Ստեպանովը դա բացատրել է նրանով, որ «սոցիալիստական սահմանադրականության գաղափարների և սկզբունքների դիրքորոշումներում դրանց դինամիկայի մեջ ըստ դիալեկտիկական-մատերիալիստական տրամաբանության օրենքների խորհրդային պետությունը իր շարժման մեջ կանգ էր առել 30-ական թվականների մակարդակում¹⁰»: Պատճառներից մեկը Ստեպանովը տեսնում էր, գործերի գնահատման ռեալիզմի դեֆիցիտում, որը ծնվել էր սոցիալիզմի վերաբերյալ ռոմանտիկ-իդեալականացված պատկերացումների կիրառությամբ: Երկրորդ պատճառը՝ սկզբում «սահմանադրականության» եզրույթի սոցիալիստական աշխարհայեացումների ընդհանուր կառուցվածքին էթե ոչ որպես լիարժեք օտար, ապա բոլոր դեպքերում, սահմանադրական իրավաստեղծման գործին չնպաստողի ընդունման մեջ¹¹:

Իրավիճակը փոքր ինչ փոփոխվեց 70-ական թվականների վերջում, երբ ԽՍՀՄ և արտերկրյա սոցիալիստական երկրների սահմանադրական զարգացման հերթական քայլերի որակով տեսական մտածողության իրականացման կարգով սկսվեցին հրատարակվել հատկապես սոցիալիստական սահմանադրականության ուսմունքների հատվածային եզրա-

⁹ Տե՛ս օրինակ. Энциклопедия государств и права. М., 1930. Т. 2.

¹⁰ Տե՛ս Степанов И.М. Уроки и парадоксы российского конституционализма, М., 1996, էջեր 11-13

¹¹ Նույն տեղում էջեր 15-17

զծերով հողվածներ, որոնք բուրժուական սահմանադրականության վերաբերյալ ծավալուն մենագրական գրականության հետ համեմատության մեջ դիտարկելով, առավել համեստ բովանդակության էին¹²: Ի.Ա. Կրավեցը սահմանադրականության վերաբերյալ իր աշխատության մեջ նշել էր, որ հասարակական առաջընթացի «չափման» համար բավարար չէ արտադրության եղանակների դիալեկտիկայի առաջնային սխեմաների դիմումը, այլ պետք է բացահայտվեն և գործառնության մեջ դրվեն նաև բազմաթիվ այլ չափորոշիչներ, հայտնի աշխարհընկալումային տեսանկյուններից նույնիսկ առավել կարևոր, քանի որ հնրավորություն են ընձեռում հասարակական գոյի տնտեսական բնութագրիչներին զուգահեռ ստանալ նրա սոցիալական, հոգևոր, պետաիրավական վիճակի հստակ հավաստի պատկեր: Նման չափորոշիչների առաջնային շարքում նա դիտարկում էր հենց իրական սահմանադրականության երևույթը¹³:

Պետք է նկատել, որ գիտության մեջ միաժամանակ ընդունված է «իրական, փաստացի սահմանադրություն» կամ «ձևական, կարծեցյալ սահմանադրություն» լակոնիկ, ծավալուն հասկացությունները¹⁴: Հատկանշական է նաև, որ սահմանադրականություն հասկացությունը ուղղակիորեն կապված է նշված հասկացությունների հետ, քանի որ ձևական, կարծեցյալ սահմանադրություններ ունեցող հասարակությունները չեն կարող զուտ դրա առկայությամբ երաշխավորել սահմանադրականության առկայությունը: Նշված դիրքորոշման լույսի ներքո, հատկապես արդիական է պրոֆեսոր Գ. Հարությունյանի մոտեցումը, որը մենք ամբողջությամբ կիսում ենք. «Սահմանադրությունից մինչև սահմանադրականություն ճանապարհը չի ավարտվում երկրի Հիմնական օրենքի ընդունումով, անցումային դրույթներով նախատեսված ինչ-ինչ նախապատրաստական քայլերով, անհրաժեշտ ինստիտուտների ու կառույցների ձևավորումով, մարդու իրավունքներն ու ազատությունները Սահմանադրության մեջ ամրագրելով¹⁵»: Այսինքն ինքնին Սահմանադրության առկայությունը չի ենթադրում սահմանադրականության հաստատում կամ դրա առկայություն:

Ուսումնասիրելով մի շարք իրավագետների մոտեցումները «սահմանադրականություն» հասկացության առանձնացրել ենք դրանցից մի քա-

¹² Տե՛ս Степанов И.М. Грани российского конституционализма (XX век) // Конституционный строй России. Вып. И.М., 1992 էջեր 30-31

¹³ Տե՛ս Кравец И.А. Формирование российского конституционализма (проблемы теории и практики). - М., - 2002. - էջեր 30-32

¹⁴ Մանրամասն տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. Теория современной конституции - М.: Норма, 2007, էջեր 105-110

¹⁵ Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն - Եր., «Նժար», 2004թ, էջ 6

նիսը: Այսպես Վ.Տ. Կաբիշևը և Տ.Մ. Պրյախինան նշում են, որ սահմանադրական իրավունքի գիտության մեջ սահմանադրականության տակ ընկալում են սահմանադրության բարձրագույն և որոշիչ դերը իրավական համակարգում, պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական կարգավորումներում սահմանադրության ուղիղ ազդեցությունը, անհատի ազատությունների և իրավունքների սահմանադրական ընդունումը, պետության և քաղաքացու փոխհարաբերությունների իրավական բնույթը: Սահմանադրականությունը, նրանք համարում են, որ դա ոչ միայն սահմանադրության շրջանակներում կառավարումն է, այլ ամենից առաջ պետության քաղաքական-իրավական կազմակերպման բնույթի վերաբերյալ արժեքների, գաղափարների և տեսանկյունների համակարգ, իրավաբանական աշխարհընկալման փիլիսոփայություն, որը հենված է իրավական պետության կանխադրությունների վրա¹⁶: Ըստ նշված հեղինակների սահմանադրականության հիմնական արժեքները ձևավորվում են այնպիսի սկզբունքների որակով, ինչպես մարդու իրավունքների գերակայությունը, ժողովրդավարությունը, իշխանությունների բաժանումը¹⁷:

Պետք է նկատել, որ Վ.Տ. Կաբիշևը սահմանադրականության վերաբերյալ իր աշխատության մեջ անդրադառնալով սահմանադրականության և սահմանադրական իրավունքի հարաբերակցության վերաբերյալ հարցին, պնդում էր, որ սահմանադրականությունը՝ սահմանադրական գաղափարները ընդհանրացված կատեգորիա է, որը խտացված արտահայտում է սահմանադրական իրավունքի էությունը, արտացոլում պետության սահմանադրական կայունությունը, ինչը և կազմում է սահմանադրական իրավունքի գիտության հիմքը, դրա միջուկը¹⁸:

Ըստ պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի սահմանադրականությունը հանդես է գալիս որպես սինթեզված հասկացություն, որը մարմնավորում է սահմանադրական կառուցվածքի և սահմանադրական գործնականի առավել էական երևույթները. Դա սահմանադրական ուսմունքն է, հենց սահմանադրությունը և դրա իրականացման սահմանները, դա և իշխանության կրողների և ամբողջ բնակչության սահմանադրական

¹⁶ Տե՛ս *Кабышев В.Т., Пряхина Т.М.*, Теоретические проблемы российского конституционализма // Вестник Саратовской государственной академии права, 1995. № 2, էջ 32

¹⁷ Նույն տեղում էջ 32

¹⁸ Տե՛ս *Кабышев В.Т.* Конституционализм в современной России // Материалы Всероссийской конференции “Конституционное и административное право”. М., 2000. էջ 11

մշակույթն է¹⁹:

Մեր կարծիքով սահմանադրականության վերաբերյալ անհրաժեշտ է խոսել որպես իրական գործող սահմանադրականության քաղաքական համակարգի: Միննույն ժամանակ առաջին հերթին տվյալ երևույթը, հասկացությունը պայմանավորվում է պետական իշխանության Հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ գործնական սահմանափակմամբ: Սահմանադրականությունը լեգիտիմացնում է պետական իշխանությունը՝ հաստատելով դրա իրավաչափությունը: Սահմանադրականությունը նպաստում է հասարակությունում պետական իշխանությանը հեղինակությամբ օժտմանը, ընդ որում ոչ թե ուժային, այլ սոցիալապես մշակված մեթոդներով: Սահմանադրականության քաղաքական համակարգը միավորում և փոխադարձ հավասարակշռում է պետության և քաղաքացիական հասարակության սոցիալ-քաղաքական շահերը չթույլատրելով անհիմն միջամտություն որևէ մեկի կողմից սահմանադրական ազատությունների և իրավունքների ոլորտ:

Հատկանշական է, որ Ա.Ն. Մեդուշևսկին համարում է, որ սահմանադրականությունը կարող է մեկնաբանվել որպես հասարակության կողմից սոցիալական կոնֆլիկտի գիտակցում, որպես այդ սոցիալական կոնֆլիկտի գործիքակազմային լուծման մեթոդ և, ի վերջո, որպես քաղաքական համակարգի որոշակի երևույթ²⁰: Ըստ Վ.Ի. Կրուսի կարծիքի, սահմանադրականությունը կարող է դիտարկվել սոցիալական պատշաճի քաղաքական-իրավական վարույթի ուղղության որակով, որը իրավունքի փիլիսոփայության հետ համեմատությամբ ունի առավել հստակ «սահմանային կողմնորոշիչներ»: Սահմանադրականության և իրավունքի փիլիսոփայության ինդերսյուսությունը վերաբերվում է իրավական իդեալին և ֆորմալ կողմից, որը «հետագծվում» է հասարակական-քաղաքական կառույցի արտաքին ձևում, և բովանդակային կողմից, որը կապված է հասարակական ինքնակառուցման զարգացման ներքին ձևի, այսինքն իրավական մտածողության կատարելագործման հետ²¹: Արդյունքում Կրուսը իր աշխատություններում հանգել է այն եզրահանգման, որ սահմանադրականությունը հանդես է գալիս նաև որպես իրավունքի ժամանակակից փիլիսոփայության մեկնաբանլու միջոց: Նման մոտեցումը

¹⁹ Սահմանադրական մշակույթի մասին մանրամասն տես՝ Գ. Հարությունյան - Սահմանադրական մշակույթ: Երևան, «Լժպ», 2005թ:

²⁰ Տե՛ս *Медушевский А.Н.* Демократия и авторитаризм: Российский конституционализм в сравнительной перспективе. М., 1998

²¹ Տե՛ս *Крусс В.И.* Конституционализм и философия права: к познанию проблемы // Право и жизнь. 1998. № 15, էջ 13

հնարավորություն կտար իրավագիտությանը հավակնել իր առջև դարաշրջանի առաջադրած «հարցերի» «պատասխանների» առավել համարժեք բնույթին: Գտնում ենք, որ սահմանադրականությունը, որպես բարդ հասարակական-քաղաքական և պետաիրավական հասկացություն և հաշվի առնելով դրա դերը և նշանակությունը յուրաքանչյուր հասարակությունում, իսկապես կարող է դառնալ իրավագետ Կրուսի կողմից նշված իրավունքի ժամանակակից փիլիսոփայության մեկնաբանումից:

Ա.Գ. Պարխոմենկոն որպես սահմանադրականության անբեկանելի առաջնություն համարում է քաղաքակրթության այնպիսի արժեքները, ինչպես քաղաքացու և մարդու իրավունքները, ազատությունները, ժողովրդավարությունը, ինքնավարությունը, պառլամենտականությունը, քաղաքական պլյուրալիզմը, բազմակուսակցությունը, սեփականության տարատեսակ ձևերը և այլն: Ըստ նրա կարծիքի սահմանադրականությունը՝ շարժում է դեպի իրավական սահմանադրական պետություն, որում սահմանադրությունը ամրագրում և երաշխավորում է սահմանադրական դեմոկրատական կառույցի հիմնական սկզբունքները²²: Միաժամանակ Ն.Ս. Բոգդանովան ուսումնասիրելով սահմանադրականության և սահմանադրական իրավունքի հարաբերակցության հարցը, իր աշխատության մեջ նշել էր, որ ներկայումս սահմանադրականությունը՝ սահմանադրական իրավունքի գիտության մեջ առավել հաճախ կիրառվող կատեգորիաներից է, որը օգտագործվում է պետության և պետական իշխանության կազմակերպման եղանակների կարգավիճակային և գնահատումային բնութագրիչների որակով սահմանադրական-իրավական գործնականի նկատմամբ:

Չենք կարող չհամաձայնել Բոգդանովայի այն կարծիքի հետ, համաձայն որի «սահմանադրականություն» հասկացությունը ըստ ընդհանրացման մակարդակի և համակարգավորող դերի, ձեռք է բերել առավել արժեքավոր, ծավալուն և հիմնական կատեգորիաներից մեկի որակը, որը հավասարազոր կիրառվում է ինչպես, ազգային այնպես նաև արտերկրյա սահմանադրական իրավունքի ուսումնասիրություններում²³:

Ն.Ս. Բոնդարը կարծում է, որ սահմանադրականության զարգացման հիմնական օրինաչափությունների բնութագրությանը և հասկացության

²² См. у Пархоменко А.Г. Идеи российского конституционализма и их реализация в отечественном конституционном (государственном) праве. М., 1998, էջ 9

²³ См. у Богданова Н.А. Категория “Конституционализм” в науке конституционного права // Российский конституционализм: проблемы и решения. М. 1999, էջեր 135-137

սահմանմանը մոտեցումների ամբողջ բազմաձևությամբ որևէ մեկի մոտ չպետք է կասկածներ առաջացնի այն փաստը, որ ինքն իրեն սահմանադրականություն կատեգորիան հանդիսանում է իրական հասարակական հարաբերությունների առավել կարևոր որակական բնութագրիչների գիտատեսական և միաժամանակ նորմատիվ իրավական արտացոլում պետության մեջ իշխանության կազմակերպման և ազատության ձեռք բերված մակարդակների տեսանկյուններից: Ըստ Բոնդարի սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքի ընդունումը, որ սահմանադրականությունն իր արտահայտման ցանկացած ձևում՝ որպես քաղաքական-իրավական (սահմանադրական) գաղափարախոսություն, իրավաբանական աշխարհընկալում, քաղաքական և իրավական գործնական և այլն, իրենում մարմնավորում է հասարակության և անհատի, քաղաքացու և պետության շահերի, իշխանության և ազատության միջև հասարակությունում ձեռք բերված փոխզիջումների ցուցանիշները²⁴:

Ն.Վ. Վիտրուկը, ըստ էության, դիտարկում է սահմանադրականությունը որպես բազմատարր և բազմամակարդակ երևույթ, իսկ դրա հասկացությունը՝ ընդարձակ և ծավալուն: Վիտրուկը անդրադառնալով սահմանադրականությանը որպես նորմատիվային-իրավական համակարգի, գտնում է, որ այն իրենից ներկայացնում է սահմանադրական պոզիտիվ իրավունքի նորմաների համակարգի ձև, որը ստանում է արտահայտում սահմանադրության և սահմանադրական իրավունքի այլ աղբյուրներում (օրենքների, սահմանադրական սովորությունների և այլնի մեջ)²⁵:

Նշված մոտեցումները հաշվի առնելով, գտնում ենք, որ սահմանադրականությունը սահմանադրական արժեքների ու սկզբունքների առկայությունն է հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական վարքագծի բոլոր դրսևորումներում: Գտնում ենք նաև, որ սահմանադրականությունը գտնվում է իրավական դոկտրինի հետ անքակտելի կապի մեջ՝ որպես պոզիտիվ իրավունքում, իրավաբանական պրակտիկայում և իրավագիտակցության մեջ գործող պատմականորեն ձևավորված սահմանադրական (իրավական) պետության մասին գաղափար-

²⁴ Տե՛ս *Бондарь Н.С.* Права человека в теории и практике российского конституционализма // Российский конституционализм: проблемы и решения. М., 1999, էջ 200

²⁵ Տե՛ս *Витрук Н.В.* Развитие конституционализма в Российской Федерации (в контексте правовых позиции Конституционного суда Российской Федерации) // Проблемы развития и совершенствования российского законодательства. Сб. Ст. Ч. 1. Тоск., 1999, էջեր 12-22

ների և ուսմունքների համակարգ: Ընդ որում, սահմանադրականության ռեժիմի բոլոր որակական հատկանիշները հանդիսանում են հենց այն հիմքը, որի վրա իսկ կառուցված է արդի սահմանադրականության դոկտրինան, որում հիմնականն է՝ սահմանադրության գերակայության սկզբունքը (իրավաբանական բարձրագույն ուժի և ուղղակի գործողության) և նրա իրացման երաշխավորված ապահովումը:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև իրավական մի շարք երևույթների և «սահմանադրականության» հասկացության կապի վերաբերյալ հիմնահարցին: Ըստ պրոֆեսոր Գ. Հարությունյանի «սահմանադրականության» հասկացությունը արդի միջազգային իրավամտաճորության մեջ կապվում է հետևյալ իրավական երևույթների հետ, ինչպիսիք են.

- սկզբունքների, գործունեության կարգի և կառուցակարգային մոտեցումների ընդհանրությունը, որոնք ավանդաբար օգտագործվում են պետական իշխանության սահմանափակման նպատակով,
- սահմանադրական միջոցները՝ պետական իշխանության համար սահմանափակումներ նախատեսելու նպատակով,
- համապետական, վերկուսակցական, միաբանող գաղափարախոսությունը,
- իրավաքաղաքական ռեժիմը, որի դերը հասարակության ներսում արդարության ու ներդաշնակության երաշխավորումն է,
- կառավարման սահմանադրական կարգի առկայությունը, պետական կառավարումը՝ սահմանափակված Սահմանադրությամբ,
- պետության ինքնասահմանափակումը,
- իրավունքի և քաղաքականության փոխներթափանցման աստիճանը,
- իրավունքի տիրապետությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր
- ոլորտներում, որը ենթադրում է մարդու իրավունքների առաջնահերթություն և երաշխավորում է անհատի ու պետության փոխադարձ պատասխանատվությունը,
- Սահմանադրության վրա հիմնված քաղաքական համակարգ,
- իրավունքի գերիշխանության սկզբունքը, որը ենթադրում է երկրի իշխանությունների ու պետական մարմինների իշխանական լիազորությունների սահմանափակում,
- պետության իրական վիճակի և Հիմնական օրենքով նախատեսված՝ երկրի իրավական մոդելի ներդաշնակությունը,
- Սահմանադրության (գրված կամ չգրված) առկայությունը եւ դրա ակտիվ ներագդեցությունը երկրի քաղաքական կյանքի վրա,

պետական համակարգի, քաղաքական ռեժիմի, անհատի իրավունքների ու ազատությունների ճանաչման և քաղաքացի պետություն փոխհարաբերությունների սահմանադրական կանոնակարգվածությունը դրա իրավական բնույթը²⁶:

Կիսելով պրոֆեսոր Գ. Հարությունյանի մոտեցումը, կարծում ենք որ նշված ցանկում հարկավոր է դիտարկել նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքի պահանջների կատարումը ինչպես նաև հասարակությունում իրավական ժխտողականության (նիհիլիզմ) բացառումը²⁷:

Այսպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռների նախադեպային (տե՛ս, Ստիլը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 23.09.1998թ., Մարկիսն ընդդեմ Բելգիայի 13.06.1979թ., «Սանդի Թայմսն» ընդդեմ Միացյալ Թագավորության 26.04.1979թ.) համաձայն՝ իրավական որոշակիության սկզբունքը նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով²⁸: ՀՀ սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-753 որոշման մեջ հայտնել է դիրքորոշում, որի համաձայն՝ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել

²⁶ Այդ մասին, մասնավորապես, տե՛ս Նոր հազարամյակի սահմանադրականությունը. Իրականության պարադիգմները եւ մարտահրավերները: Լույս է տեսել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի նախաձեռնությամբ: Երևան, «Նժար», 2013, էջեր 35-40

²⁷ Տե՛ս *Власенко Н.А.* Разумность и определенность в правовом регулировании, М., 2014, էջեր 51-59

²⁸ Տե՛ս *Case of Marckx v. Belgium* [1979] no. 6833/74, *Sunday Times v. The United Kingdom*, No. 6538/74, «49, 2 EHRR 245., *Steel and Others v. The United Kingdom*, No. 24838/94, «54, 1998-VII, No. 91.

իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: 2014 թվականի մարտի 18-ի ՄԴՈ 1141 որոշմամբ, ՀՀ սահմանադրական դատարանը սահմանել էր, որ իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը, առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Վերոնշյալ որոշմամբ դատարանը նաև արձանագրել էր, որ իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ: Այսինքն վերլուծելով նշյալ դիրքորոշումները կարող ենք նշել, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել օրենք, եթե այն ձևակերպված այնպիսի հստակությամբ, որը թույլ տա անձին դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Պատահական չենք համարում, որ իրավական որոշակիության պահպանումը հանդիսանում է Սահմանադրությամբ երաշխավորված «իրավական պետություն» սկզբունքի պահանջներից:

Անդրադառնալով իրավական ժխտողականության (նիհիլիզմ) բացառման հիմնահարցին, գտնում ենք, որ այն գտնվում է դիալեկտիկական կապի մեջ սահմանադրականության հաստատման գործընթացի հետ, այսինքն այն հասարակությունները, որտեղ գերակայող է իրավական ժխտողականությունը, այնտեղ սահմանադրականության հաստատման գործընթացը դատապարտված է անհաջողության, միաժամանակ այն հասարակությունները, որտեղ բարձր է սահմանադրականության կայացման աստիճանը, ցածր է իրավական ժխտողականությունը: Ըստ պրոֆեսոր Ա. Հարությունյանի, ներկայիս դրությամբ հետխորհրդային պետությունների մեծ մասում ձևավորվել է ծայրահեղ անբարենպաստ

սոցիալական մթնոլորտ, որը խթանում է մարդկանց հակաիրավական մտածողության սիստեմի առաջընթացը: Նշվածի բնութագրիչը հանդիսանում է իրավական ժխտողականությունը²⁹: Ըստ Ա. Հարությունյանի իրավական ժխտողականությունը ձեռք է բերել որակապես նոր հատկանիշներ, փոխվել է նրա էությունը, առաջացման պատճառները, ազդեցության ոլորտները, այն ձեռք է բերել տարերային բնույթ՝ վերածվելով հաճախ իրավական ամենաթողության: Հեղինակը նաև նշել է, որ իրավական նիհիլիզմը տարածվում է ամենօրյա սոցիալական հարաբերություններից մինչև պետական համակարգ: Չենք կարող չհամաձայնվել պրոֆեսոր Ա. Հարությունյանի այն պնդման հետ, որ իրավական նիհիլիզմը հանդիսանում է հասարակության համար վտանգավոր երևույթ, որը կարող է լուրջ խոչընդոտներ ստեղծել երկրում բարեփոխումների իրականացման համար³⁰: Կարծում ենք, որ իրավական նիհիլիզմը լրջորեն խոչընդոտում է նաև սահմանադրականության կայացման գործընթացին, այդ թվում նաև հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը:

Ելնելով վերոգրյալից հարկ ենք համարում նշել, որ Հայաստանում ժողովրդավարական հասարակության և իրավական պետության մեջ սահմանադրականության դոկտրինայի արմատական ամրապնդումը հասարակական գիտակցության մեջ, անմիջականորեն կապված է համապատասխան սահմանադրական-իրավական աշխարհընկալումների, իրավագիտակցության բարձրացման և խթանման ինչպես նաև իրավամտածողության փոփոխման հետ: Իրավական արժեքների և իդեալների համակարգում մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները որպես գերակայող և անմիջականորեն գործող նորմեր ընկալելուն զուգահեռ առաջնային պետք է լինի Սահմանադրությանը որպես պետության հիմնական (բարձրագույն) օրենքի նկատմամբ վերաբերմունքը հասարակության բոլոր անդամների կողմից: Ընդունված փաստ է, որ սահմանադրականության երաշխավորման կարևորագույն նախապայմանն է, որ Սահմանադրության ընդունումից հետո նրա նորմերը պետք է արդյունավետորեն կյանքի կոչվեն և հուսալիորեն պաշտպանված լինեն: Գտնում ենք, որ նշվածին հասնելու լավագույն միջոցներից է անհատի սոցիալական վարքագծի և պետական իշխանության մարմինների հանրային վարքագծի սահմանադրականացումը:

²⁹ Ст' u Арутюнян А.А. Конституционализм: проблемы постсоветской реальности – М.: Норма, 2013, էջեր 86-88

³⁰ Նույն տեղում, էջ 88



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Ավետիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց՝ «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրում (այսուհետ՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 2(76)2015

Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 27.11.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով Համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2014թ. օգոստոսի 6-ին:

2. Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 50.000.000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ:

3. Համաձայնագրի նպատակն է ՀՀ արտահանման խթանումը, ներդրումների ներգրավումը և ձեռնարկություններին տրամադրվող՝ որակի կառավարման ծառայությունների կարողությունների ամրապնդումը:

4. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հիսուն միլիոն (50.000.000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի Բաժին 2.07-ի դրույթների համաձայն, Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագրի («Ծրագիր») ֆինանսավորմանն աջակցելու նպատակով: Փակման ամսաթիվը 2020թ. հունիսի 30-ն է:

5. Համաձայնագիրն ունի չորս առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի կատարում», Առդիր 3. «Մարման ժամանակացույց», Առդիր 4. «Հատկացումների հետ կապված ցուցանիշները», Հավելված և 2 Լրացուցիչ նամակներ:

6. Ծրագիրը կազմված է հետևյալ մասերից՝ Մաս Ա. «Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում», Մաս Բ. «Ներդրումների և արտահանման խթանում», Մաս Գ. «Ազգային որակի ենթակառուցվածքի արդիականացում», Մաս Դ. «Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում»:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել վճարման ենթակա սկզբնական վճարը Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով (Հոդված II. 2.03),
- կիսամյակային մուծումներով յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին, յուրաքանչյուր Տոկոսագումարի ժամանա-

- կահատվածի համար վճարել տոկոսը, որի դրույքը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված հաշվարկային դրույքին գումարած Փոփոխական սպրեդը՝ պայմանով, որ վարկի մայր գումարն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխարկելու դեպքում փոխարկման ժամանակաշրջանում ՀՀ կողմից վճարման ենթակա տոկոսները կհաշվարկվեն Ընդհանուր պայմանների Հոդված IV-ի դրույթների համաձայն. չնայած վերոհիշյալին, եթե վարկի առհանված մնացորդի որևէ գումար չի վճարվում սահմանված ժամկետում, և նման չվճարումը շարունակվում է 30 օր ժամանակահատվածով, ապա վճարման ենթակա տոկոսները հաշվարկել Ընդհանուր պայմանների 3.02-րդ բաժնի ե) կետին համապատասխան (Հոդված II, կետեր 2.04 և 2.05),
- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին՝ սկսած 2024 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2038 թվականի օգոստոսի 15-ը ներառյալ մարել Վարկի հիմնական գումարը 3.33%-ի չափով, իսկ 2039 թվականի փետրվարի 15-ին՝ 3.43%-ի չափով (Հոդված II, բաժին 2.06, Առդիր 3, կետ 1),
 - մայր գումարի վճարման ամսաթվի դրությամբ Վարկի միջոցների ամբողջությամբ չառհանման դեպքում մարել մայր գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ առհանված Վարկի գումարը՝ համաձայն Համաձայնագրի 3-րդ առդիրի 1-ին կետով նախատեսված կարգով, ինչպես նաև վճարման առաջին ամսաթվից հետո առհանված գումարը մարել առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին Բանկի կողմից որոշված չափով՝ բազմապատկելով մասհանված յուրաքանչյուր գումարը կոտորակային թվով, որի համարիչում Մայր գումարի վճարման ամսաթվի համար Համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված մասնակի մարման սկզբնական մասնաբաժինն է (Մասնակի մարման սկզբնական մասնաբաժին), իսկ հայտարարում՝ այդ ամսաթվի դրությամբ կամ դրան հաջորդող Մայր գումարի վճարման ամսաթվերին մարման ենթակա բոլոր սկզբնական մասնակի մարման մասնաբաժինների հանրագումարը. անհրաժեշտության դեպքում նշված գումարները ճշգրտել՝ նվազեցնելով Համաձայնագրի 3-րդ առդիրի 4-րդ կետում նշվող այն գումարները, որոնց վրա տարածվում է արժույթի փոխարկումը (Առդիր 3, կետ 2),
 - փաստել Ծրագրի նպատակի իրագործման՝ ՀՀ հանձնառության մասին և այս նպատակով, Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթների համաձայն, Ծրագիրն իրականացնել՝ Ծրագրի Ա, Գ և Դ

մասերը Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) միջոցով՝ միաժամանակ համակարգելով Ծրագրի Գ մասի իրականացումը Չափագիտության ազգային ինստիտուտի (ՉԱԻ), Հավատարմագրման ազգային մարմնի (ՀԱՄ) և Ստանդարտացման ազգային ինստիտուտի (ՍԱԻ) հետ, Ծրագրի Բ.1 և Բ.2 մասերը՝ «Հայաստանի ներդրումների, արտահանման խթանման և արդյունաբերության զարգացման գործակալության» (ՆԱԽԳ) միջոցով, և Ծրագրի Բ.3 մասը ՆԱԽԳ-ի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) միջոցով (հոդված III., 3.01),

- չսահմանափակելով Համաձայնագրի 3.01 Բաժնի դրույթները, և եթե Հայաստանի Հանրապետությունը և Բանկը ձեռք չեն բերում այլ համաձայնություն՝ ապահովել Ծրագրի իրականացումը Համաձայնագրի 2-րդ Առդիրի դրույթների համաձայն (հոդված III., 3.02),
- Ծրագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո ստեղծել Էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ գործող՝ Ծրագրի ղեկավար հանձնաժողով (ԾՂՀ), որը կգործի մինչև Ծրագրի ավարտը և կվերահսկի Ծրագրի իրականացումը (Առդիր 2, Բաժին I, մաս «Ա», կետ 1),
- ձևավորել Ծրագրի կառավարման գրասենյակ (ԾԿԳ) ԷՆ-ի կազմում, որը պատասխանատու կլինի Ծրագրի ընդհանուր համակարգման, դիտանցման ու գնահատման, ապահովության երաշխիքների համապատասխանության, Ծրագրի իրականացման մասին Բանկին և ԾՂՀ-ին հաշվետվությունների ներկայացման համար, ինչպես նաև ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում իր պարտականությունների կատարման համար ԾԿԳ-ն ապահովված լինի համապատասխան կարողություններով և միջոցներով (Առդիր 2, Բաժին I, մաս «Ա», կետ 1),
- ապահովել Ծրագրի իրականացումը՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ուղեցույցների դրույթներին համապատասխան (Առդիր 2, Բաժին I, մաս «Բ»),
- Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի դրույթներին համապատասխան՝ վարել ֆինանսական կառավարման համակարգ, չսահմանափակելով վերոհիշյալը՝ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող քառասունհինգ օրվա ընթացքում կազմել և Բանկին ներկայացնել Ծրագրի՝ առողիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ տվյալ կիսամյակի համար՝ Բանկի համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ (Առդիր 2, Բաժին II, մաս «Բ», կետեր 1 և 2),
- Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցների հաշվին ֆինանս-

սավորման ենթակա բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել՝ Գնումների ուղեցույցների I բաժնում սահմանվող պահանջների և Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, մաս «Ա», կետ 1),

- Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա խորհրդատվական բոլոր ծառայությունները ձեռք բերել Գնումների ուղեցույցների I և IV բաժիններում սահմանվող պահանջների և Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, մաս «Ա», կետ 2):

8. Հաշվի առնելով, որ այս Ծրագրի նպատակն է հզորացնել ՀՀ արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնարկություններին տրամադրվող՝ որակի կառավարման ծառայությունների կարողությունները, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1178



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 24-ԻՆ՝
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 27-ԻՆ
ԼՅՈՒՔՍԵՄԲՐՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվա-

կանի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Երեւանի ջրամատակարարման բարելավում» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Ֆինանսական պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2014 թվականի հունիսի 24-ին եւ նույն թվականի հունիսի 27-ին՝ համապատասխանաբար Երեւանում եւ Լյուքսեմբուրգում, որի նպատակն է Պայմանագրով նախատեսված ծրագրին համապատասխան Երեւանի ջրամատակարարման բարելավման համար Եվրոպական ներդրումային բանկի կողմից (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տրամադրել 5.167.195.69 եվրո (7.000.000 ԱՄՆ դոլար) գումարի չափով վարկ՝ առավելագույնը թվով 5 տրանշներով (մասնաբաժիններով): Բացի դրանից, հիշյալ ծրագրի կատարմանն է ուղղվելու նաեւ Եվրոպական հանձնաժողովի կողմից տրամադրվելիք 5.500.000 եվրո գումարի չափով ներդրումային դրամաշնորհը: Վարկի տոկոսադրույքը կարող է լինել հաստատագրված կամ լողացող, որը որոշվում է Պայմանագրի 3-րդ հոդվածում սահմանված կարգով:

Պայմանագրով ֆինանսավորվող ծրագրի կատարման ժամանակահատվածը 2015 թվականի մարտի 1-ից մինչեւ 2018 թվականի մարտի 1-ն է:

2. Պայմանագիրը բաղկացած է թվով 5 հավելվածներից, որոնցում մանրամասնված են իրականացվելիք ծրագրի տեխնիկական նկարագրությունը, վարկի դիմաց վճարվելիք տոկոսադրույքների հաշվարկման հետ կապված ընթացակարգերը, ինչպես նաեւ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ այլ իրավադրույթներ:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- գրավոր տեղեկացնել Բանկին վարկային հաշվին հատկացման կատարման մասին՝ ոչ ուշ, քան ժամանակացույցով հատկացման սահմանված ամսաթվից 15 օր առաջ, ինչպես նաեւ հաստատել, որ Բանկի

վարկային հաշիվը Հայաստանի Հանրապետության սեփական բանկի հաշիվն է (1-ին հոդված, 1.02.Դ),

- եթե Հայաստանի Հանրապետության գրավոր հարցման դեպքում Բանկը հետաձգում է ընդունված տրանշի ցանկացած հատկացումը մասամբ կամ ամբողջությամբ, մինչև Հայաստանի Հանրապետության կողմից նշված ամսաթիվը, վճարել հետաձգման փոխհատուցում, որը հաշվարկվում է հետաձգված հատկացման գումարի հիման վրա (1-ին հոդված, 1.05.Ա),

- վճարել Բանկին կանխավճարի փոխհատուցում այն դեպքում, երբ Բանկը չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույքով տրանշը (1-ին հոդված, 1.06. Գ., ք) -կետ, i) ենթակետ),

- կատարել փոխհատուցում Բանկին 10.03-րդ հոդվածով սահմանված կարգով, այն դեպքում, երբ Բանկը չեղյալ է հայտարարում ընդունված տրանշը պարտավորության չկատարման դեպքի առաջացման պատճառով (1-ին հոդված, 1.06. Գ., ք) կետ, ii) ենթակետ),

- Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 15 օրվա ընթացքում վճարել գնահատման վճար (50.000 եվրո) կամ երաշխավորել դրա վճարումը Բանկին, որը կատարվում է ծրագրի հետ կապված՝ Բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց (1-ին հոդված, 1.08),

- ԱՄՆ դոլարով վճարել յուրաքանչյուր տրանշի համար տոկոսներ, հետվճարումներ եւ այլ գանձումներ (2-րդ հոդված, 2.02),

- տոկոսի վճարումը կատարել մասերով ֆիքսված տոկոսադրույքով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով (3-րդ հոդված, 3.01.Ա),

- տոկոսի վճարումը կատարել մասերով եւ այն ժամանակահատվածում, որը սահմանված է պայմանագրի 3-րդ հոդվածի 3.01.Բ. բաժնում,

- յուրաքանչյուր տրանշ հետ վճարել մասնաբաժիններով եւ հատկացման առաջարկում սահմանված ամսաթվերին (4-րդ հոդված, 4.01.Ա),

- Բանկին վճարել կանխավճարի փոխհատուցումը կանխավճարի ամսաթվին, ֆիքսված տոկոսադրույքով տրանշի առնչությամբ, որը նախապես վճարվում է այն դեպքում, երբ Վարկառուն նախօրոք վճարում է ֆիքսված տոկոսադրույքով տրանշը (4-րդ հոդված, 4.02.Բ., 1) կետ),

- կանխավճարի հետ միաժամանակ վճարել նաեւ կանխավճարի գումարի կուտակված տոկոսները եւ, առկայության դեպքում, փոխհատուցման տույժի գումարը (4-րդ հոդված, 4.02.Գ),

- տրանշի համար համապատասխան վճարման ամսաթվից տարբերվող որեւէ այլ ամսաթվին կանխավճար կատարելու դեպքում փոխհատուցել Բանկին վերջինիս կողմից սահմանված գումարի այնպիսի չափով, որը պահանջվում է փոխհատուցել իրեն այն միջոցների ստացման համար, որոնք ստացվել են վճարման ամսաթվին ոչ համապատասխան

(4-րդ հոդված, 4.04),

- վարկի շրջանակներում փոխառած բոլոր գումարներն օգտագործել ծրագրի իրականացման նպատակով (6-րդ հոդված, 6.01),

- ծրագիրն իրականացնել տեխնիկական նկարագրության համաձայն, որը Բանկի հաստատմամբ կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխությունների ենթարկվել եւ երաշխավորել ծրագրի ավարտը նշված վերջնաժամկետում (6-րդ հոդված, 6.02),

- երաշխավորել, որ ծրագրի իրականացման նպատակով եւ դրա հետ կապված սարքավորումները ձեռք են բերված, ծառայությունների մատուցումն ապահովված է, եւ աշխատանքները պատվիրված են միջազգային բաց մրցույթների կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգերի միջոցով (6-րդ հոդված, 6.04),

- ապահովել Պայմանագրի 6-րդ հոդվածի 6.05 բաժնում ամրագրված շարունակական պարտավորությունների կատարումը (6-րդ հոդված, 6.05),

- հավաստիացնել եւ երաշխավորել Բանկին, որ կպահպանվեն Պայմանագրի 6-րդ հոդվածի 6.07 բաժնում նշված պայմանները,

- ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք Բանկը ողջամտորեն պահանջում է ծրագրի առնչությամբ ենթադրյալ կամ կասկածելի ցանկացած արգելված վարքագիծ հետաքննելու կամ վերացնելու համար (6-րդ հոդված, 6.09, ա) կետ, II) ենթակետ),

- ապահովել, որ ծրագրի ծախսերն ամբողջությամբ ծածկելու համար (ներառյալ պարտքի սպասարկման ծախսերը, սակայն բացառելով ակտիվների արժեզրկումը) ցանկացած սակագնային բարձրացում հաստատվի ՀՀ համապատասխան մարմինների կողմից՝ այն պայմանով, որ սակագները մնան մատչելիության սահմաններում (6-րդ հոդված, 6.12),

- վարել համապատասխան հաշվեմատյաններ ու գրանցամատյաններ, որոնցում ամբողջությամբ եւ ճշգրտորեն կարտացոլվեն բոլոր ֆինանսական գործարքները, այդ թվում՝ ծրագրի հետ կապված ծախսերը (6-րդ հոդված, 6.14., բ) կետ),

- վճարել բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ ցանկացած բնույթի այլ պարտադիր վճարները, ներառյալ պետական տուրքը եւ գրանցման վճարները, որոնք ծագում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի կատարումից կամ իրականացումից (9-րդ հոդված, 9.01),

- հատուցել եւ Բանկին զերծ պահել որեւէ կորստից, որը հետեւանք է Հայաստանի Հանրապետության կողմից կատարված որեւէ վճարման կամ մասնակի մարման, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի հստակ սահմանված ձեւից տարբերվող ձեւով՝ չսահմանափակելով Պայմանագրի կամ կիրառելի իրավունքի ներքո Բանկի որեւէ իրավունք (9-րդ հոդված, 9.03, բ) կետ),

- Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում անմիջապես հետ վճարել Վարկը՝ ամբողջությամբ կամ մասամբ՝ Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին՝ համաձայն Պայմանագրի 10-րդ հոդվածի 10.01 բաժնում ամրագրված դրույթների (10-րդ հոդված, 10.01),

- Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի մասով՝ Պայմանագրի 10.01-րդ հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը կանխավճարի փոխհատուցման հետ միասին՝ ցանկացած հիմնական գումարի մասով, որը ենթակա է նախապես վճարման (10-րդ հոդված, 10.03.Ա),

- լողացող տոկոսադրույքով տրանշի մասով՝ Պայմանագրի 10.01-րդ հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը՝ ընթացիկ արժեքի 0.15%-ին համարժեք գումարի հետ միասին, որը տարեկան կտրվածքով հաշվարկվում է կուտակվում է վճարման ենթակա գումարի վրա, որը պետք է նախապես վճարվի այնպես, ինչպես այն տոկոսը, որը կհաշվարկվեր եւ կկուտակվեր, եթե այդ գումարը մնար չմարված՝ տրանշի մարման ժամանակացույցին համապատասխան, մինչև մարման ամսաթիվը (10-րդ հոդված, 10.03.Բ),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը Պայմանագրի ներքո իր իրավունքներից կամ պարտավորություններից որեւէ մեկը չհանձնի կամ չփոխանցի՝ առանց Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության (12-րդ հոդված, 12.03):

4. Պայմանագրում նախատեսված են նաեւ կողմերի իրավունքների ու պարտականությունների պատշաճ կատարումն ապահովող այլ դրույթներ, ինչպես նաեւ Պայմանագիրը գործողության մեջ դնելու ընթացակարգեր:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ սոցիալական բնագավառում դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի

հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Երեւանի ջրամատակարարման բարելավում» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1179



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 24-ԻՆ՝
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 27-ԻՆ
ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երևանում և 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2014 թվականի նոյեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ֆինանսական պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև ստորագրվել է 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երևանում և 2014 թվականի հունիսի 27-ին՝ Լյուքսեմբուրգում:

2. Պայմանագրով Եվրոպական ներդրումային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 25.500.000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար) եվրո գումարի չափով վարկ (Վարկ)՝ Պայմանագրով նախատեսված ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու նպատակով:

Ծրագրի նպատակն է ապահովել խմելու ջրի կայուն և շարունակական մատակարարումը և բարելավել կոյուղաջրերի սանիտարահիգիենիկ հեռացումը համակարգի հիմնական կետերում, ինչպես նաև ապահովել կոյուղաջրերի մաքրման էկոլոգիապես առողջ և կայուն գործընթաց «Նոր ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում:

Ծրագիրը ներառում է.

- Վանաձորում և Գյումրիում ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շարունակական վերանորոգումը, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզերի գյուղական շրջաններում այդ օբյեկտների բարեկարգումը.

- Արմավիրի մարզում ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շարունակական վերականգնումը, ինչպես նաև համատեղ մաքրման կայանի կառուցումն Արմավիրի (Մեծամոր, Նորապատ) քաղաքների համար,

- ջրամատակարարման և կոյուղաջրերի հավաքման համակարգեր

Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի մոտ 40 փոքր քաղաքներում և գյուղերում՝ «Հայջրմուղկոյուղի» ընկերության սպասարկման տարածքներում:

- փոքրածավալ միջոցառումներ փորձական ծրագրի ձևաչափով մոտ 560 գյուղում, որոնք նախկինում չէին սպասարկվում հինգ ջրային ընկերություններից որևէ մեկի կողմից: Այն հիմնված է լինելու «Հայաստանում 560 ցրված համայնքների (գյուղերի) մատակարարման նպատակով ինտեգրված՝ տեխնիկական, սոցիալական, ինստիտուցիոնալ և առևտրային մեխանիզմների կառուցման վերաբերյալ հայեցակարգային ուսումնասիրության» արդյունքների վրա, որոնք ակնկալվում են 2014 թվականին: Ազդակիր համայնքները կկցվեն համապատասխան ջրային կոմունալ ծառայությանն իրենց տարածաշրջանում:

Ծրագիրն իրականացվելու է 2014-2018 թվականների ընթացքում:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) վճարել յուրաքանչյուր տրանշի տոկոսները, հետվճարումները և այլ գանձումները եվրոյով.

բ) Վարկի շրջանակներում իր փոխառած բոլոր գումարներն օգտագործել Ծրագրի իրականացման նպատակով.

գ) երաշխավորել, որ Ծրագրի իրականացման նպատակով և դրա հետ կապված սարքավորումները ձեռք են բերված, ծառայությունների մատուցումն ապահովված է և աշխատանքները պատվիրված են միջազգային բաց մրցույթների կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգերի միջոցով՝ Պայմանագրով սահմանված կարգով.

դ) վճարել ողջ հիմնական գումարը, տոկոսը, փոխհատուցման գումարը և Պայմանագրի ներքո վճարման ենթակա մյուս գումարներն առանց որևէ ազգային կամ տեղական հարկման նվազեցման.

ե) կրել բոլոր գանձումների և այլ ծախսերի վճարման պարտավորությունը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման գանձումները, որոնք առաջանում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի նախապատրաստման, փոփոխման, կատարման, իրականացման և դադարեցման կամ Պայմանագրից կամ այլ համապատասխան փաստաթղթից հրաժարման, ինչպես նաև Վարկի համար որևէ երաշխիքի փոփոխման, ստեղծման, կառավարման, իրականացման և իրացման առնչությամբ:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի նոյեմբերի 27-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Պայմանագրին:

5. Սույն գործի շրջանակներում ուսումնասիրելով իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հա-

մաձայն սահմանադրական դատարանում Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության՝ «Համայնքային ենթակառուցվածքներ II, Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ներդրումային ծրագրի 1-ին փուլն արդեն իսկ ավարտվել է, իսկ 2-րդ փուլի իրականացումն ընթացքում է, և դրա ավարտը նախատեսված է 2015 թվականին: Ծրագրի 3-րդ փուլով նախատեսված միջոցառումների իրականացման համար տրամադրվող 73.0 մլն եվրոյից 17.5 մլն եվրոն դրամաշնորհային միջոցներ են: Ծրագրի 3-րդ փուլում KfW բանկի (30.0 մլն եվրո վարկ, 2.5 մլն եվրո դրամաշնորհ) հետ իր մասնակցությունն է ունենալու նաև Եվրոպական ներդրումային բանկը (25.5 մլն եվրո վարկ): Ֆինանսավորում է նախատեսվել նաև Եվրոպական հարևանության ներդրումային ծրագրի (15.0 մլն եվրո դրամաշնորհ) ֆոնդերից:

Համաձայն վերոհիշյալ բացատրության՝ Ծրագրով հատկացված միջոցների օգտագործման մասով աուդիտի իրականացում նախատեսված չէ: Սակայն Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների վերահսկումն իրականացվում է մրցույթով ընտրված գերմանական GITEC Consult GmbH կազմակերպության կողմից: «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների լիազորություններն ստանձնած մասնավոր կառավարչի՝ գերմանական «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյջ (MVV-decon GmbH)», «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի (MVV Energie AG)» և հայկական «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունների կոնսորցիումի, որը 2009թ. ստանձնել է ընկերությունների կառավարումը, իսկ 2014թ. հունվարից կոնսորցիումի կազմում ընդգրկվել է նաև «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորություններն ստանձնած ֆրանսիական «ՍԱՈՒՌ Ս.Ա.Ս. (SAUR S.A.S.)» կազմակերպությունը, որի գործառույթների մեջ է մտնում նաև ներդրումային ծրագրերի իրականացման վերահսկումը: Պայմանագրային կառավարչի գործողության տարեկան արդյունքները ենթարկվում են աուդիտի՝ տեխնիկական մասով՝ FICHTNER, իսկ ֆինանսական մասով՝ Grant Thornton կազմակերպությունների կողմից:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական

դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երևանում և 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ,

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1180



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ «ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ» N8388-AM ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՄՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Գալստյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Լրացուցիչ

ֆինանսավորում Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի համար» N8388-AM վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի նոյեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Լրացուցիչ ֆինանսավորում Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի համար» N8388-AM վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին: Ըստ Համաձայնագրի՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետության բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ ցանցերի հուսալիության բարձրացման ու թողունակության մեծացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով Համաձայնագրում սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տրամադրում է 40.000.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ 25 տարի ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ: Վարկի փակման ժամկետը 2018 թվականի դեկտեմբերի 31-ն է:

2. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս են կազմում Հավելվածը և թվով երեք առդիրները, որոնցում տրված են Ծրագրի նկարագրությունը, Ծրագրի իրականացման կարգը, վարկի մարման ժամանակացույցը և սահմանումները: Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված է Ծրագրի նպատակը, այն է՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրահաղորդման ցանցերի հուսալիության ու կարողության բարելավումը և կառուցվածքը, որը ներառում է «Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում» և «Տեխնիկական աջակցություն» մասերը: Համաձայնագրի 2-րդ առդիրում նշված են Ծրագրի իրականացման միջոցներն ու պայմանները, իսկ 3-րդ առդիրում՝ Վարկի մարման ժամանակացույցը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնական վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին

(0.25%) հավասար չափով, այն է՝ 100.000 ԱՄՆ դոլար,

- տոկոսադրույքի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարել տոկոսագումար, որը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված Ուղղորդիչ տոկոսադրույքին, որին գումարվում է Փոփոխական տարբերությունը (variable spread)՝ պայմանով, որ Վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա որևէ մասի փոխարկման դեպքում Վարկառուի կողմից Փոխարկման ժամանակահատվածում այդպիսի գումարի վճարման ենթակա տոկոսագումարը կորոշվի Բանկի կողմից 2010 թվականի հուլիսի 31-ին ընդունված «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկերի տրամադրման ընդհանուր պայմանների» (այսուհետ՝ Ընդհանուր պայմաններ) Հոդված IV-ի դրույթների համաձայն,

- կիսամյակային մուծումներով, սկսած 2024 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2038 թվականի օգոստոսի 15-ը յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը 3.33%, իսկ 2039 թվականի փետրվարի 15-ին՝ 3.43% մասնավճարով,

- իրականացնել Ծրագիրը «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԲԷՑ) միջոցով՝ վերջինիս հետ կնքելով վարկային գումարի տրամադրման վերաբերյալ օժանդակ համաձայնագիր (այսուհետ՝ Օժանդակ համաձայնագիր)՝ Բանկի կողմից հաստատված դրույթներին համապատասխան,

- Օժանդակ համաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը և կատարվեն Վարկի նպատակները, ինչպես նաև առանց Բանկի նախնական հաստատման՝ չփոխանցել, չփոփոխել, անվավեր չճանաչել կամ չհրաժարվել Օժանդակ համաձայնագրից կամ դրա որևէ դրույթից,

- պահպանել և երաշխավորել, որ ԲԷՑ-ը պահպանի Ծրագրի կատարման ընթացակարգերի վերաբերյալ 2011 թվականի ապրիլի 18-ին ԲԷՑ-ի կողմից կազմված, հաստատված և թարմացված ձեռնարկը (այսուհետ՝ Գործառնական ձեռնարկ), կատարի դրա ներքո ստանձնած իր բոլոր պարտավորությունները և չփոխանցի, չփոփոխի, անվավեր չճանաչի կամ չհրաժարվի Գործառնական ձեռնարկից՝ առանց Բանկից նախնական համաձայնություն ստանալու,

- ապահովել Ծրագրի իրականացումը «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկերի միջոցով ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքը և կոռուպցիան կանխելու և դրա դեմ պայքարելու ուղեցույցների» դրույթների համաձայն,

- Համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ ապահովել և նաև ԲԷՑ-ից պահանջել ապահովել Ծրագրի բոլոր միջոցառումների

նկատմամբ՝ ըստ հանգամանքների, Բնապահպանական կառավարման պլաններում (ԲԿՊ), Վերաբնակեցման քաղաքականության շրջանակում (ՎՔՇ) և Վերաբնակեցման գործողությունների ծրագրում (ՎԳԾ) սահմանված չափորոշիչների, քաղաքականության, ընթացակարգերի ու մեխանիզմների կիրարկումը,

- ապահովել կամ ԲԷՑ-ից պահանջել ապահովել Ծրագրի առաջընթացի վերահսկումն ու գնահատումը և պատրաստել Ծրագրի հաշվետվություններ Ընդհանուր պայմանների դրույթներին համապատասխան և Բանկի համար ընդունելի ցուցանիշների հիման վրա,

- վարել կամ պահանջել ԲԷՑ-ից վարել ֆինանսական կառավարման համակարգ Ընդհանուր պայմանների պահանջներին համապատասխան,

- պատրաստել կամ պահանջել ԲԷՑ-ից պատրաստել յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օր անց, և Բանկին ներկայացնել Բանկի պահանջները բավարարող ձևաչափով և բովանդակությամբ՝ միջանկյալ, աուդիտ չանցած Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ընդգրկում են տվյալ եռամսյակը,

- ապահովել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Ընդհանուր պայմանների դրույթների համաձայն,

- ապահովել, որպեսզի Ծրագրի համար պահանջվող և Վարկի հասույթներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերվեն Բանկի կողմից համապատասխանաբար 2010 և 2011 թվականներին հրապարակված «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի փոխառուների կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառությունների և Միջազգային զարգացման ընկերակցության վարկերի և դրամաշնորհների շրջանակում կատարվող՝ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների» (Գնումների ուղեցույցներ) դրույթներին համապատասխան,

- ապահովել, որպեսզի Ծրագրի համար պահանջվող և Վարկի հասույթներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերվեն 2011 թվականի հունվարով թվագրված՝ «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից ՎՁՄԲ վարկերի ու ՄՁԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում կատարվող՝ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների» ուղեցույցի պահանջներին և Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործը քննության նախապատրաստելու ընթացքում քննության առարկա վարկային համաձայնագրի վերաբերյալ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից 2014 թվականի նոյեմբերի 19-ին ներկայացված

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բացատրության մեջ նշվել է, որ Ծրագրով նախատեսվում է փոխարինել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների 30 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումները:

5. Սույն Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Լրացուցիչ ֆինանսավորում Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի համար» N8388-AM վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 ղեկտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1181



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԷԼԵԿՏՐՈՒԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Գալստյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց §2014 թվականի սեպտեմբերի 5-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Էլեկտրաէներգիայի

հաղորդման ցանցի վերականգնման ծրագիր» վարկային համաձայնագրում (Հատուկ գործառնություններ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 18 նոյեմբերի 2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը և բանավոր պարզաբանումները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերականգնման ծրագիր» վարկային համաձայնագիրը (Հատուկ գործառնություններ) (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) միջև ստորագրվել է 2014թ. սեպտեմբերի 5-ին: Հայաստանի Հանրապետության կողմից այն ստորագրել է էներգետիկայի և բնական պաշարների նախարարը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Համաձայնագրին հավանություն է տվել 2014թ. նոյեմբերի 19-ի արձանագրային որոշմամբ:

Ըստ Համաձայնագրի՝ ԱԶԲ-ն համաձայնում է «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերականգնման» վարկային ծրագրի նպատակների համար Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տարբեր արժույթներով վարկ տրամադրել՝ 24, 022, 000 Հատուկ փոխառության իրավունքին համարժեք (շուրջ 37 մլն ԱՄՆ դոլար): Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից 5 տարին՝ արտոնյալ:

2. Համաձայնագիրն ունի նախաբան, յոթ հոդվածներ, հինգ առդիրներ և երրորդ առդիրին հավելված աղյուսակ, որոնց դրույթները պարզաբանում են Համաձայնագրում օգտագործվող եզրույթները, նկարագրում վարկի միջոցներով ֆինանսավորվող ծրագիրը, սահմանում վարկի կառուցվածքը, վարկային միջոցների հատկացման և մասհանման, ինչպես նաև վերահատկացման պայմանները, այդ միջոցների օգտագործման եղանակներն ու դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները:

Համաձայնագիրը և դրա անբաժան մաս կազմող առդիրները պարունակում են նաև կողմերի պարտականությունների պատշաճ կատարումն ապահովող այլ դրույթներ:

3. Համաձայնագրով ֆինանսավորվող ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել Հայաստանի Հանրապետության ներքին էլեկտրահաղորդման ցանցի գործառական արդյունավետությունը: Ծրագրով նախատես-

վում է ընդլայնել վերահսկման ու տվյալների ձեռքբերման և էներգիայի կառավարման համակարգերը, վերականգնել երկու 220 կՎժ լուծված ենթակայանները (Ագարակ 2 և Շինուհայր), տրամադրել աջակցություն ծրագրի կառավարման և շինարարության վերահսկողության և կարողությունների հզորացման համար:

Նախատեսվում է Ծրագիրն ավարտել 2019 թ. դեկտեմբերի 31-ին:

Վերահսկման ու տվյալների ձեռքբերման և էներգիայի կառավարման համակարգերի ընդլայնումը ներառում է սարքաշարերի և ծրագրաշարերի տեղադրում, կապի սարքավորումների, օպտիկական հողանցման հաղորդալարի տեղադրում, բեռնվածքի բաշխման կենտրոնի բարելավում և արդիականացում, ինչպես նաև համակարգերի վերաբերյալ վերապատրաստում:

Համաձայն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տեղեկանքի՝ Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ ներդրված վերահսկման և տվյալների ձեռքբերման SCADA (Supervisory Control and Acquisition Data) համակարգը լիարժեք գործող և արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվում է լրացուցիչ տեղադրել շուրջ 200 կմ օպտիկամանրաթելային մալուխ, զգալիորեն ավելացնել համակարգից օգտվողների քանակը, արդիականացնել գոյություն ունեցող ծրագրային փաթեթը և ստեղծել հարևան երկրների SCADA համակարգերի հետ տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն:

Ենթակայանների վերականգնման բաղադրիչը ներառում է էլեկտրաէներգիայի հնացած տրանսֆորմատորների, ավտոմատ անջատիչների, գատիչների, հսկողության և պաշտպանիչ սարքերի փոխարինում:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրության համաձայն՝ «Շինուհայր» ենթակայանը նախորդ տարիներին Համաշխարհային բանկի աջակցությամբ մասնակիորեն վերակառուցվել է, բայց ենթակայանի որոշ սարքեր հնացած են և չեն բավարարում հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի հաղորդման պահանջները: Այդ ենթակայանի հետ կապված ֆինանսավորում է նախատեսվում նաև Վերակառուցման և զարգացման բանկի հետ 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված վարկային համաձայնագրով:

4. Ծրագիրն իրականացվելու է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» (ԲԷՑ) փակ բաժնետիրական ընկերությունների կամ դրանց՝ ԱԶԲ-ի համար ընդունելի, ցանկացած իրավահաջորդի կողմից: Վարկառուն պարտավորվում է Վարկի համար կիրառելի նույն պայմաններով այդ Վարկի միջոցներից վերավարկավորել ԷԷՀՕ-ին՝ 13.600.000 ԱՄՆ դոլարին, իսկ ԲԷՑ-ին՝ 23. 400. 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է վարկային ծրագ-

րի նպատակների իրագործման համար իր գործակալներ նշանակել վերը նշված իրավաբանական անձանց և այդ գործակալություններին լիազորել ձեռնարկելու Համաձայնագրի և Վարկի տրամադրման կանոնակարգերի համապատասխան դրույթներով պահանջվող կամ թույլատրվող ցանկացած գործողություն կամ կնքելու որևէ համաձայնագիր, որը պարտադիր կլինի նաև իր՝ Վարկառուի համար:

5. Քննության առարկա Համաձայնագրով Վարկառուն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ, մասնավորապես՝

- վարկատուին վճարել տարեկան 2.0% տոկոսադրույք արտոնյալ ժամանակահատվածում և դրանից հետո՝ ժամանակ առ ժամանակ Վարկի հաշվից մասհանված և չվճարված գումարի համար (հոդված II, բաժիններ 2.02ա և 2.03),

- սկսած 2019թ. նոյեմբերի 15-ից մինչև 2039թ. մայիսի 15-ը՝ ամեն տարվա նոյեմբերի 15-ին և մայիսի 15-ին մարել Վարկի հաշվից մասհանված Վարկի հիմնական գումարը 600.550.00 ԱՄՆ դոլար չափաբաժնով (հոդված II, բաժին 2.04, Առդիր 2):

6. Վարկառուն պարտավորվում է նաև.

- ապահովել, որպեսզի վարկի միջոցներն օգտագործվեն Համաձայնագրի պահանջներին համապատասխան, բացառապես Ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար (հոդված III, բաժին 3.02, 3.03 և 4-րդ առդիր),

- հնարավորություն ընձեռել ԱԶԲ-ի ներկայացուցիչներին ստուգելու Ծրագրի կատարման ընթացքը, ապրանքներն ու աշխատանքները և ցանկացած համապատասխան գրառում ու փաստաթուղթ (հոդված IV, բաժին 4.02),

- օժանդակել Ծրագրի իրականացման գործակալություններին կատարելու Ծրագրով նախատեսված իրենց պարտավորությունները, և չձեռնարկել կամ թույլ չտալ այնպիսի գործողություն, որը կխանգարի այդ պարտավորությունների կատարմանը (հոդված IV, բաժին 4.04),

- ապահովել, որպեսզի գնվող բոլոր ապրանքները և ծառայությունները չխախտեն կամ չտոնահարեն արդյունաբերական կամ մտավոր սեփականության որևէ իրավունք կամ որևէ երրորդ կողմի պահանջ (Առդիր 4, կետ 7, ենթակետ «ա») և որ դրանց գնման համար կնքվող բոլոր պայմանագրերը պարունակեն համապատասխան հավաստիացումներ և երաշխիքներ,

- երաշխավորել ԱԶԲ-ի հետ խորհրդակցությունն էլեկտրաէներգիայի քաղաքականության առանցքային զարգացումների և բարեփոխումների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությունների մեթոդաբանության մասին հարցերի շուրջ (Առդիր 5, կետ 3),

- ապահովել, որպեսզի ոչ ուշ, քան մինչև 2015 թվականի հունիսի 1-ը էլեկտրաէներգիայի սակագինը որոշելու նպատակներով ԷԷՀՕ-ն և ԲԷՑ-

ը նախապատրաստեն ու Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀՄԿՀ) քննարկմանը և հաստատմանը ներկայացնեն Ծրագրի համար իրենց ներդրումային պլանները, որպեսզի ՀՄԿՀ-ն տարեկան կտրվածքով վերանայի սակագինը և սահմանի այն մակարդակով, որը թույլ է տալիս Ծրագրի ծախսի ամբողջական վերականգնումը, այդ թվում՝ Վարկի հետվճարումը՝ վճարման ենթակա տոկոսներով և փոխարժեքի տատանումներով (Առդիր 5, կետ 5),

- ապահովել, որ ԷԷՀՕ-ի և ԲԷՑ-ի կողմից Ծրագրի և Ծրագրի բոլոր սարքավորումների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, շահագործումը և շահագործումից հանելը համապատասխանեն բնապահպանության, առողջապահության և ապահովության վերաբերյալ ՀՀ գործող օրենքներին ու կանոնակարգերին, բնապահպանական երաշխիքներին, և Ծրագրի համար նախնական բնապահպանական ուսումնասիրությամբ ու Ծրագրի բնապահպանական կառավարման պլանով ամրագրված բոլոր միջոցներին ու պահանջներին, ինչպես նաև Երաշխիքների մոնիտորինգի հաշվետվության մեջ ամրագրված ցանկացած՝ ուղղիչ կամ կանխարգելիչ գործողության (Առդիր 5, կետ 6),

- ապահովել, որ Ծրագրի համար պահանջվող՝ հողային և ճանապարհաուղիների բոլոր իրավունքները տրամադրվեն ժամանակին, և Ծրագիրը չունենա ոչ կամավոր վերաբնակեցման բացասական ազդեցություն, իսկ եթե Ծրագիրն ունենում է նման բացասական ազդեցություն, ապա ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ԷԷՀՕ-ի և ԲԷՑ-ի կողմից Ծրագիրը ՀՀ գործող օրենքներին և Վարկի տրամադրման կանոնակարգերի բնապահպանական երաշխիքներին համապատասխանեցնելու համար (Առդիր 5, կետ 7),

- ԷԷՀՕ-ի և ԲԷՑ-ի հետ մեկտեղ՝ հետևել ԱԶԲ-ի հակակոռուպցիոն քաղաքականությանը և ընդունել, որ ԱԶԲ-ն իրեն իրավունք է վերապահում հետաքննելու Ծրագրին առնչվող՝ կոռուպցիայի, խարդախության, գաղտնի համաձայնության կամ որևէ այլ հարկադիր գործելակերպ, և համագործակցել ցանկացած նման հետաքննության հետ՝ տրամադրելով անհրաժեշտ օգնություն՝ այդ հետաքննությունը բավարար կերպով ավարտելու համար (Առդիր 5, կետ 15):

7. Սահմանադրական դատարանը նշում է, որ Համաձայնագրով ֆինանսավորվող Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի այն դրույթներին, ըստ որոնց՝ Հայաստանի կառավարության համար առաջնահերթ նշանակություն ունեն այն նախագծերին ֆինանսական աջակցության ցուցաբերումը, որոնք կերաշխավորեն սոցիալ-տնտեսական զարգացումը, կունենան համազգային նշանակություն և կապահովեն երկրի էներգետիկ անվտանգության և անկախության բավարար մակարդակ:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Համաձայնագրով նախատեսված Ծրագրի պատշաճ իրականացման արդյունքում զգալիորեն կաճի Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի արդյունավետությունը և հուսալիությունը, ինչպես նաև կկրճատվեն էլեկտրահաղորդման կորուստները, ինչը համապատասխանում է բնական պաշարների ողջամիտ օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի պահանջին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Մ Ե Ց**.

1. 2014 թվականի սեպտեմբերի 5-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերականգնման ծրագիր» վարկային համաձայնագրում /Հատուկ գործառնություններ/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1182



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի /զեկուցող/, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հոկտեմբերի 3-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ենթակառուցվածքների կայու-

նության աջակցության ծրագիր» վարկային համաձայնագրում /Հատուկ գործառնություններ/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 20 նոյեմբերի 2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր» վարկային համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի /այսուհետ՝ ԱԶԲ/ միջև ստորագրվել է 2014թ. հոկտեմբերի 3-ին: Հայաստանի Հանրապետության /այսուհետ՝ Վարկառու/ կողմից այն ստորագրել է ֆինանսների նախարարը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Համաձայնագրին հավանություն է տվել 2014թ. նոյեմբերի 27-ի արձանագրային որոշմամբ:

Ըստ Համաձայնագրի՝ ԱԶԲ-ն համաձայնում է «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի» նպատակների համար Վարկառուին տարբեր արժույթներով վարկ տրամադրել՝ 31, 770, 000 Հատուկ փոխառության իրավունքին համարժեք /շուրջ 49 մլն ԱՄՆ դոլար/: Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից 5 տարին՝ արտոնյալ:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, թվով վեց հոդվածներից, Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող չորս առդիրներից և երրորդ առդիրի երկու հավելվածներից: Համաձայնագրում նախատեսված են Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարումն ապահովող դրույթներ, Վարկի միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողության որոշակի մեխանիզմներ, ինչպես նաև Համաձայնագրի գործողության համար անհրաժեշտ պայմաններ:

3. Համաձայնագրով ֆինանսավորվող Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգերի ստեղծումը: Ծրագրով նախատեսվում է բարելավել ոլորտների կառավարման համակարգերը, մշակել ներդրումային որոշումներում առավել արդյունավետ հատկացումներին ուղղված ռազմավարություն և գործընթացներ, բարելավել կարգավորման շրջանակ-

ները, ուժեղացնել մշտադիտարկման համակարգերը:

Նախատեսվում է Ծրագիրն ավարտել մինչև 2015թ. սեպտեմբերի 30-ը:

4. Վարկը տրամադրվելու է երկու տրանշով: Երկրորդ տրանշի տրամադրման համար անհրաժեշտ է, որպեսզի Վարկառուի կողմից հաստատված լինի ջրամատակարարման ոլորտի համար ռազմավարությունը և ֆինանսավորման պլանը, ջրամատակարարման գործակալությունների գործառույթների ներդաշնակեցումը, ինչպես նաև ջրային օրենսգրքի և հարակից իրավական ակտերի ներդաշնակեցումը ոլորտի ռազմավարության և գործառույթների վերանայման առաջարկությունների հետ:

Ճանապարհային տրանսպորտի ոլորտի համար անհրաժեշտ է, որ Վարկառուն ընդունած լինի ճանապարհների պահպանման ֆինանսավորման ռազմավարություն՝ 2015թ. բյուջեում ամրագրված թիրախներով, ինչպես նաև տրանսպորտի և կապի նախարարության գլխավորությամբ գործող խորհրդատվական մարմնի կողմից պետք է հաստատված լինեն ճանապարհային ակտիվների կառավարման վրա հիմնված՝ ճանապարհների պահպանման ծախսերը:

5. Համաձայնագիրը նախատեսում է, որ վարկային հաշվից գումարների առհանում կարելի է կատարել միայն այն ծախսերի համար, որոնք կապված են թույլատրելի ապրանքների հետ, որոնք արտադրվում և մատակարարվում են ԱԶԲ-ի անդամ երկրներից, որոնք բանկի կողմից ժամանակ առ ժամանակ նշված են լինելու որպես գնումների համար ընդունելի աղբյուրներ:

6. Ըստ Համաձայնագրի՝ Վարկառուն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ, որոնք են.

- ԱԶԲ-ին վճարել տարեկան 2% տոկոսադրույք արտոնյալ ժամկետի ընթացքում և դրանից հետո՝ Վարկային հաշվից հանած և ժամանակ առ ժամանակ մարման ենթակա Վարկի գումարի դիմաց,

- 2019 թվականի նոյեմբերի 15-ից սկսած կիսամյակային պարբերականությամբ մարել Վարկային հաշվից առհանված Վարկի Մայր գումարը:

7. Վարկառուն պարտավորվում է նաև.

- ապահովել, որ Վարկի միջոցներն օգտագործվեն Համաձայնագրի դրույթներին համապատասխան Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով,

- վարկային հաշվից գումարների առհանում կատարել միայն այն ծախսերի համար, որոնք կապված են թույլատրելի ապրանքների հետ, որոնք արտադրվում և մատակարարվում են Ասիական զարգացման բանկի անդամ այն երկրներից, որոնք բանկի կողմից ժամանակ առ ժամանակ նշված են լինելու որպես գնումների համար ընդունելի աղբյուրներ,

- վարել կամ կազմակերպել, որ վարվեն զրանցումներ և փաստաթղթեր, որոնք բավարար են Վարկի միջոցներից ֆինանսավորվող թույլա-

տրելի ապրանքների մասին փաստելու և Ծրագրի առաջընթացը գրանցելու համար,

• վարկային հաշվից գումարների առհանման վերաբերյալ հայտը ներկայացնել ԱԶԲ-ի համար ընդունելի ձևով, դրա հետ մեկտեղ տրամադրել Վարկառուի հավաստագիր, որը կհաստատի, որ յուրաքանչյուր տարվա համար Թույլատրելի ներմուծումների արժեքն ավելի մեծ կլինի, քան Վարկի գումարը, որի մասհանումներն ակնկալվում են այդ տարվա ընթացքում,

• ներկայացնել Ծրագրի իրականացման ժամանակահատվածի ամբողջ ընթացքում կատարված առևտրի վիճակագրությունը և Ծրագրին առնչվող այլ տեղեկատվություն,

• կազմել պետության կողմից կարգավորվող օպերատորների կողմից կառավարվող ջրային ոլորտի ակտիվների գրանցամատյանը,

• բյուջեի կատարողականի առնչությամբ հաստատել ջրային տնտեսության ոլորտի ԿՀՑ-երի կանոնավոր մշտադիտարկում,

• ստեղծել Ծրագրի Ղեկավար կոմիտե, որը կնախագահի ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնի գործադիր տնօրենը, և որի կազմում ընդգրկված կլինեն Իրականացնող բոլոր գործակալությունների՝ աշխատանքային մակարդակի ներկայացուցիչներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի հոկտեմբերի 3-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր» վարկային համաձայնագրում /Հատուկ գործառնություններ/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1183



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2001 թվականի ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԽԱՂՈՂԻ
ԵՎ ԳԻՆՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2001 թվականի ապրիլի 3-ին Փարիզում ստորագրված՝ Խաղողի և գինու միջազգային կազմակերպություն հիմնադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Խաղողի և գինու միջազգային կազմակերպությունը (այսուհետ՝ ԽՄԿ) ստեղծվել է 2001 թվականի ապրիլի 3-ին Փարիզում կնքված միջազգային համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) հիման վրա, որը հաջորդել է 1924 թվականին ստեղծված Խաղողի և գինու գրասենյակին: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 1-ից՝ 31-րդ վավերագիրն ավանդապահին հանձնելուց հետո: 2014 թվականի օգոստոսի 27-ի դրությամբ Համաձայնագիրը վավերացրել է 45 պետություն:

Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում թվով երկու հավելվածներ. Հավելված 1՝ «Խաղողի և գինու ոլորտում յուրաքանչյուր անդամ պետության դիրքը որոշելու մեթոդը» և Հավելված 2՝ «Անդամ պետությունների քվեարկելու իրավունքի, պարտադիր ֆինանսական ներդրումների որոշման, ինչպես նաև լեզուների ֆինանսավորման մեթոդները»:

2. Իր իրավասությունների շրջանակում ԽՄԿ-ի նպատակն է.

1) տեղեկացնել իր անդամներին այն միջոցառումների մասին, որոնք կարող են առնչվել խաղողագործության և գինեգործության ոլորտի արտադրողներին, սպառողներին և այլ դերակատարներին,

2) աջակցել՝ միջկառավարական և ոչ կառավարական միջազգային կազմակերպություններին, հատկապես ստանդարտացման գործունեություն իրականացնող կազմակերպություններին,

3) աջակցել գոյություն ունեցող գործելակերպերի և ստանդարտների միջազգային ներդաշնակեցմանը և, անհրաժեշտության դեպքում, նոր միջազգային ստանդարտների նախապատրաստմանը՝ խաղողագործության և գինեգործության արտադրանքի արտադրության և շուկայահանման պայմանները բարելավելու և սպառողների շահերն ապահովելու համար:

3. Նպատակներին հասնելու համար ԽՄԿ-ի գործունեությունը հանգում է հետևյալին.

1) նպաստել գիտատեխնիկական հետազոտություններին և փորձերին և ուղղորդել դրանք իր անդամների կարիքները հոգալու, արդյունքները գնահատելու, որակյալ փորձագետներ հրավիրելու և համապատասխան միջոցների արդյունքները շրջանառելու նպատակով,

2) մշակել առաջարկություններ ու մոնիտորինգի ենթարկել դրանց իրականացումը,

3) աջակցել սպառողների առողջության պաշտպանության և սննդամթերքի անվտանգությանը նպաստելու հարցերում,

4) խրախուսել անդամների միջև համագործակցությունը,

5) իր գործունեության ընթացքում հաշվի առնել անդամ պետություններից յուրաքանչյուրի առանձնահատկությունները՝ կապված գինեգործական ապրանքների արտադրության համակարգերի, ինչպես նաև գինեգործության և գինու ու խաղողի հիմքով ոգելից խմիչքների պատրաստման մեթոդների հետ,

6) պարբերաբար վերազնահատել իր կառույցների ու աշխատանքային ընթացակարգերի արդյունավետությունը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

1) կատարել ԽՄԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ յուրաքանչյուր տարի Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածների դրույթների կիրառմամբ սահմանված չափով ֆինանսական ներդրում,

2) ներկայացնել իր պատվիրակներին ԽՄԿ-ի Գլխավոր ասամբլեայի կազմում ընդգրկվելու համար՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր անդամ է որոշում իր պատվիրակների թիվը, բայց կարող է ունենալ միայն երկու ձայն, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև լրացուցիչ թվով ձայներ, որոնք հաշվարկվում են օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, որոնցով որոշվում է յուրաքանչյուր անդամ պետության համապատասխան դիրքը խաղողագործության և գինեգործության ոլորտում՝ Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներում նշված պայմանների ներքո,

3) ապահովել, որ ՀՀ պատվիրակները ներկա լինեն նիստերին,

4) որպես տեղեկատվության և հաղորդակցման աղբյուր, ԽՄԿ-ի դերին նպաստելու համար, պատճառաբանված հարցման դեպքում տրամադրել խաղողագործության և գինեգործության ոլորտին առնչվող տվյալներ և տեղեկատվություն:

5. Մույն Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2001 թվականի ապրիլի 3-ին Փարիզում ստորագրված՝ Խաղողի և գինու միջազգային կազմակերպություն հիմնադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1184



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՆԱՏՕ-Ի ԿՈՂՄԻՑ ԴԵԿԱՎԱՐՎՈՂ ՈՉ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՍԲ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող ոչ ռազմական վարժանքների, խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու Վճռական աջակցության առաքելությունում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» նամակների փոխանակմամբ կնքված համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 11.12.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող ոչ ռազմական վարժանքների, խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու Վճռական աջակցության առաքելությունում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագիրը կնքվել է 2014թ. դեկտեմբերի 5-ին և 2014թ. դեկտեմբերի 6-ին՝ նամակների փոխանակմամբ:

2. Միջազգային անվտանգության ապահովման ուժերի /այսուհետ՝ ՄԱԱՌԻ/ կազմում ՀՀ խաղաղապահ զորախմբի մասնակցության իրավական հիմքերն ստեղծվել են 2009 թվականի հոկտեմբերի 19-ին և 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության և Հյուսիսատլանտյան դաշինքի միջև նամակների փոխանակման միջոցով կնքվող համաձայնագրով, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ:

«Վճռական աջակցություն» առաքելության ստեղծման, գործառույթների, պարտավորությունների և կարգավիճակի վերաբերյալ սկզբունքներն ամրագրված են «Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության և Աֆղանստանի Իսլամական Հանրապետության միջև Աֆղանստանում փոխադարձաբար համաձայնեցված (ՆԱՏՕ-ի գլխավորությամբ) գործո-

դություններ իրականացնող ՆԱՏՕ-ի զինված ուժերի և ՆԱՏՕ-ի անձնակազմի կարգավիճակի մասին» համաձայնագրում:

Համաձայնագրի նպատակն է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող Անվտանգության աջակցության միջազգային ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված իրավական հարցերի կարգավորումը:

«Վճռական աջակցություն» առաքելությանը տրամադրած ուժերի համար Հայաստանի Հանրապետությունը ՆԱՏՕ-ից չի ստանա վճարումներ կամ փոխհատուցումներ: Ազգային ներկայացուցչության ծախսերը ՆԱՏՕ-ի ցանկացած շտաբում կլինի Հայաստանի Հանրապետության հաշվին:

Ցանկացած հարց, որը սույն նամակով կարգավորված չէ, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պարտավորությունը և ոչ մի ֆինանսական պարտավորություն չի առաջացնում ՆԱՏՕ-ի և «Վճռական աջակցություն» առաքելության մասնակից այլ ազգային բաղկացուցիչ տարրերի համար:

Հայաստանի Հանրապետությունը կպահպանի իր գորախմբերի նկատմամբ ազգային հրամանատարությունը:

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման և մեկնաբանման հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են ՆԱՏՕ-ի և Հայաստանի Հանրապետության միջև համապատասխան բանակցությունների միջոցով: «Վճռական աջակցություն» առաքելությանը Հայաստանի Հանրապետության աջակցման հետ կապված օպերատիվ խնդիրները կարգավորվում են ՎԱԱՀ-ի և հայկական ազգային գորախմբի հրամանատարի կամ նրանց կողմից նշանակված ներկայացուցիչների կողմից: Սույն Համաձայնագիրը կարող է լրացվել ՆԱՏՕ-ի և Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված ներկայացուցիչների միջև կնքված իրականացման կարգավորումների միջոցով:

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ ՆԱՏՕ-ի և Հայաստանի Հանրապետության փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ՀՀ ներպետական ընթացակարգերի ավարտման մասին ՀՀ-ի կողմից ՆԱՏՕ-ին գրավոր ծանուցելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա «Վճռական աջակցություն» առաքելության ողջ ընթացքում, քանի դեռ ՆԱՏՕ-ն կամ Հայաստանի Հանրապետությունն առաքելության ավարտից առնվազն 3 ամիս առաջ գրավոր չի ծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Պաշտոնական ներկայացուցչի բացատրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումը կշարունակի իր առաքելությունը գերմանական գորախմբի կազմի մեջ և ֆինանս-

սակն ծախսերը կշարունակի հոգալ գերմանական կողմը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- պատասխանատվություն կրել հայկական գորախմբի անձնակազմի, նրանց զենքերի և հանդերձանքի տեղափոխման համար՝ նշանակված մեկնման վայրից մինչև նշանակված գործողությունների վայր և հետադարձ ուղղությամբ, ըստ փոխադարձաբար համաձայնեցված ռոտացիոն ժամանակացույցի, առանց ՆԱՏՕ-ի կողմից վճարման,

- պատասխանատվություն կրել Հայաստանի Հանրապետության անձնակազմին գործողությունների կատարման վայրում սննդի, կեցության, վառելիքի, վառելիքաքսուկային նյութերի և բուժօգնության, ինչպես նաև հիմնական աջակցության տրամադրման համար, առանց ՆԱՏՕ-ի կողմից վճարման,

- առանց ՆԱՏՕ-ի կողմից վճարման, պատասխանատու լինել Հայաստանի Հանրապետության անձնակազմի աշխատավարձի, հատուկ վճարների, լրավճարների, օրապահիկի փոխհատուցման և վարձատրությունների ու այլ վճարումների կատարման համար, որը սովորաբար վճարվում է գործողությունների վայրում տեղակայված անձնակազմին,

- Հայաստանի Հանրապետության անձնակազմին տրամադրել առաքելության կատարման համար անհրաժեշտ զենքեր և հանդերձանքի այլ պարագաներ՝ առանց ՆԱՏՕ-ի վճարման,

- հրաժարվել միմյանց դեմ և մյուս բոլոր օպերատիվ գործընկերակրների դեմ ուղղված սեփական և օգտագործվող զույթին վնաս պատճառելուց բխող հայցապահանջներից և «Վճռական աջակցություն» առաքելությանը մասնակցող Հայաստանի Հանրապետության գորախմբի անձնակազմին պատճառված մարմնական վնասվածքների փոխհատուցման պահանջներից,

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գործողությունների, անփութության հետևանքով երրորդ կողմից ներկայացված վնասների փոխհատուցման համար պատասխանատվություն կրել այն երկրի նկատմամբ, որի կողմից բարձրացվել է պատճառված վնասի հետ կապված հարցը: Երրորդ կողմերի բոլոր հայցապահանջներն ընթացք են ստանում ՎԱԱՀ-ի կողմից հրապարակված ընթացակարգերի հիման վրա և ներկայացվում են կարգավորման այն երկրի կողմից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար:

Հաշվի առնելով, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ որպես գործընկեր պետություն, զարգացնում է գործակցային ռազմական հարաբերություններ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ պետությունների հետ, և քանի որ միջազգային անվտանգության ապահովման արդի համակարգում բոլոր պետությունների անվտան-

գույքային խնդիրները փոխկապակցված են, Հայաստանի Հանրապետությունը ևս պարտավոր է ՄԱԿ-ի կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունների շրջանակներում իր ներդրումն ունենալ միջազգային անվտանգության ապահովմանն ուղղված առաքելություններում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող ոչ ռազմական վարժանքների, խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու Վճռական աջակցության առաքելությունում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» նամակների փոխանակմամբ կնքված համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1185



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 դեկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բան-

կի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին:

2. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել քսաներեք միլիոն (23.000.000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի II հոդվածի 2.07-րդ բաժնի դրույթների համաձայն, Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված ծրագրի («Ծրագիր») ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով:

Ծրագրի փակման ամսաթիվը 2020 թվականի մայիսի 31-ն է (Առդիր 2, Բաժին IV, մաս «Բ», կետ 2):

Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝ 10 տարի:

3. Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված ծրագրի նպատակն է՝ բարելավել արտադարյերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կենսունակությունը նպատակային համայնքներում և ավելացնել ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեշտիների արտադրանքի շուկայահանումը:

4. Համաձայնագիրն ունի երեք առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի կատարումը», Առդիր 3. «Մարման ժամանակացույցը», Հավելված, Լրացուցիչ նամակներ և դրանց կից հավելվածներ:

5. Ծրագիրը կազմված է հետևյալ մասերից՝ Մաս I. «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգը», Մաս II. «Արժեշրթայի զարգացումը», Մաս III. «Պետական հատվածի հաստատությունների ամրապնդումը», Մաս IV. «Ծրագրի համակարգումը և կառավարումը»:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել վճարման ենթակա սկզբնական միանգամյա միջնորդավճարը՝ Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով (հոդված II, բաժին 2.03),

- կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին, տոկոսադրույթի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարել տոկոսը, որը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված կողմնորոշիչ տոկոսադրույթին գումարած Փոփոխական սփրեդը՝ պայմանով, որ Վարկի հիմնական գումարն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխարկելու դեպքում փոխարկման ժամանակահատվածում ՀՀ կողմից վճարման ենթակա տոկոսները կորոշվեն Ընդհանուր պայմանների հոդված IV-ի դրույթների համաձայն: Չնայած վերոհիշյալին, եթե Վարկի մասհանված հաշվեկշռի որևէ գումար չի վճարվում սահմանված ժամկետում, և 30 օրվա ընթացքում վճարումը չի կատարվում, ապա վճարման ենթակա տոկոսները հաշվարկել Ընդհանուր պայմանների 3.02-րդ բաժնի «ե» կետին համապատասխան (հոդված II, կետեր 2.04 և 2.05),

- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին՝ սկսած 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2038 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ մարել Վարկի հիմնական գումարը 3.33%-ի չափով, իսկ 2039 թվականի փետրվարի 1-ին՝ 3.43%-ի չափով (հոդված II, բաժին 2.06, Առդիր 3, կետ 1),

- եթե վարկի միջոցներն ամբողջությամբ մասհանվել են հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին ՀՀ կողմից մարվելիք Վարկի հիմնական գումարը որոշել Բանկի կողմից՝ բազմապատկելով՝ ա) մասհանված վարկային մնացորդը հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, բ) հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվի համար՝ Առդիր 3-ի Մասնակի մարումների բաժնով՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով մարվելիք գումարը՝ նվազեցնելու համար սույն առդիրի 4-րդ կետում նշվող ցանկացած գումար, որի նկատմամբ կիրառվում է արժույթի փոխարկումը (Առդիր 3, կետ 1),

- հիմնական գումարի վճարման ամսաթվի դրությամբ Վարկի

միջոցների ամբողջությամբ չառհանման դեպքում մարել հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ առհանված Վարկի գումարը՝ համաձայն Համաձայնագրի 3-րդ առդիրի 1-ին կետով նախատեսված կարգի, ինչպես նաև վճարման առաջին ամսաթվից հետո առհանված գումարը մարել առհանման ամսաթվին հաջորդող՝ հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին Բանկի կողմից որոշված չափով՝ բազմապատկելով մասհանված յուրաքանչյուր գումարը կոտորակային թվով, որի համարիչում հիմնական գումարի վճարման ամսաթվի համար Համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված մասնակի մարման սկզբնական մասնաբաժինն է (Մասնակի մարման սկզբնական մասնաբաժին), իսկ հայտարարում՝ այդ ամսաթվի դրությամբ կամ դրան հաջորդող հիմնական գումարի վճարման ամսաթվերին մարման ենթակա բոլոր սկզբնական մասնակի մարման մասնաբաժինների հանրագումարը. անհրաժեշտության դեպքում նշված գումարները ճշգրտել՝ նվազեցնելով Համաձայնագրի 3-րդ առդիրի 4-րդ կետում նշվող այն գումարները, որոնց վրա տարածվում է արժույթի փոխարկումը (Առդիր 3, կետ 2),

- հիմնական գումարի վճարման որևէ ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամսվա ընթացքում Վարկից մասհանված գումարները մարել հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած մասհանման ամսաթվին հաջորդող հիմնական գումարի վճարման երկրորդ ամսաթվից (Առդիր 3, կետ 3, ենթակետ «ա»),

- հայտնել Ծրագրի նպատակների իրագործման՝ ՀՀ հանձնառության մասին և այս նպատակով, Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթների համաձայն, Ծրագիրն իրականացնել գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) միջոցով (հոդված III, 3.01),

- չսահմանափակելով Համաձայնագրի 3.01 բաժնի դրույթները, և բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությունը և Բանկը ձեռք չեն բերում այլ համաձայնություն՝ ապահովել Ծրագրի իրականացումը Համաձայնագրի 2-րդ առդիրի դրույթների համաձայն (հոդված III, 3.02),

- Ծրագրի պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Ծրագրի իրականացման ողջ ընթացքում գյուղատնտեսության նախարարության կազմում պահպանել՝ Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ՝ Բանկի համար ընդունելի մանդատով, աշխատակազմով, այլ ռեսուրսներով և տեխնիկական առաջադրանքով: Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակը պատասխանատու է Ծրագրի ամենօրյա համակարգման և իրականացման համար (Առդիր 2, Բաժին I, մաս «Ա», կետ 1),

- ապահովել Ծրագրի իրականացումը՝ Հակակոռուպցիոն ուղեցույց-

ների դրույթներին համապատասխան (Առդիր 2, Բաժին I, մաս «Բ»),

• Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի դրույթների համաձայն՝ պահպանել կամ ապահովել ֆինանսական կառավարման համակարգի պահպանումը, չսահմանափակելով վերոհիշյալը՝ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող քառասունհինգ օրվա ընթացքում կազմել և Բանկին ներկայացնել Ծրագրի՝ աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ տվյալ կիսամյակի համար՝ Բանկի պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ (Առդիր 2, Բաժին II, մաս «Բ», կետեր 1 և 2),

• Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել՝ Գնումների ուղեցույցների I բաժնում նշված պահանջների և Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, մաս «Ա», կետ 1),

• Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցների հաշվին ֆինանսավորվող խորհրդատվական բոլոր ծառայությունները ձեռք բերել Խորհրդատուների ուղեցույցների I և IV բաժիններում նշված պահանջների և Համաձայնագրի 2-րդ Առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, մաս «Ա», կետ 2),

• գնահատել, ուսումնասիրել, հաստատել և մշտադիտարկման ենթարկել Համայնքային հիմնադրամի ենթածրագրերը և Նպատակային ենթածրագրերը, Ծրագրի գործառնական ձեռնարկում և I. Գ բաժնում ամրագրված ընդունելիության չափանիշներին և ընթացակարգերին համապատասխան հատկացնել Համայնքային հիմնադրամի ֆինանսավորում՝ ընտրված Համայնքային հիմնադրամի շահառուներին և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ՝ ընտրված Նպատակային ենթածրագրերի շահառուներին (Առդիր 2, Բաժին I, մաս «Գ», կետ 1),

• անցկացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում և գնահատում (Առդիր 2, Բաժին II, մաս «Ա», կետ 1):

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ծրագիրը, որի համար վարկային միջոցներ են ներգրավվում, հասցեական բնույթ չունի, հստակ չի երևում, թե Հայաստանի Հանրապետության որ համայնքների համար ինչ բնույթի աշխատանքների արդյունքում պետք է ապահովվեն «Լրացուցիչ հմ. 3 նամակի լրացում» վերտառությամբ աղյուսակում ներկայացված ցուցանիշները: Ծրագրի հասցեականության բացակայությունը մեծացնում է նաև վարկային ռեսուրսների օգտագործման ռիսկայնության աստիճանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարությունն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի վարկային միջոցների ներգրավման ծրագրային հիմնավորումների հարցին, ինչը կբարձրացնի

նան նման ծրագրերի իրականացման թափանցիկության աստիճանը:

8. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2014 թվականի մարտի 26-ի թիվ 11/3 որոշմամբ հաստատված՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացված ծրագրերի ընթացիկ հաշվետվությամբ արձանագրվել են տարբեր բնույթի խախտումներ:

Սույն գործով քննության առարկա վարկային համաձայնագրի կատարման ընթացքում հնարավոր խախտումները բացառելու համար անհրաժեշտ է հասցեագրված վերահսկողություն վարկային միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1186

2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ նաեւ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին:

2. Համաձայնագրով Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է վեց միլիոն երկու հարյուր վաթսու հազար (6.260.000) հատուկ փոխառության իրավունքներին համարժեք փոխառություն, որից Համաձայնագրով սահմանված պայմաններին եւ կարգին համապատասխան կհատկացվի երկու միլիոն չորս հարյուր վաթսու հազար (2.460.000) հատուկ փոխառության իրավունքներով գումար (փոխառության Ա մասնաբաժին կամ ՄԶԸ 5505-AM) եւ երեք միլիոն ութ հարյուր հազար (3.800.000) հատուկ փոխառության իրավունքներով գումար (փոխառության Բ մասնաբաժին կամ ՄԶԸ 5504-AM)՝ աջակցելու համար Համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանը:

Մասհանված փոխառության մնացորդի Ա մասնաբաժնի համար տոկոսավճարի գումարը կազմում է տարեկան մեկ եւ մեկ քառորդ տոկոս (1.25%), իսկ փոխառության մնացորդի Բ մասնաբաժնի համար՝ տարեկան մեկ ամբողջ չորս տասնորդական տոկոս (1.4%): Վճարման ժամկետներն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը եւ օգոստոսի 1-ը: Վճարման արժույթն է դրլարը:

Ծրագրի նպատակներն են՝

ա) բարելավել արոտավայրերի եւ անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կենսունակությունը նպատակային համայնքներում.

բ) ավելացնել ընտրված անասնապահական եւ բարձրարժեք ագրո-

պարենային արժեզրթանների արտադրանքի շուկայահանումը:

Օրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ.

- արժեզրթայի զարգացում.

- պետական հատվածի կառույցների ուժեղացում.

- Օրագրի համակարգում եւ կառավարում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Օրագրի պատշաճ եւ արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Օրագրի իրականացման ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կազմում պահել Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ.

բ) կազմել եւ Միջազգային զարգացման ընկերակցությանը ներկայացնել, վերջինիս համար ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան, Օրագրի իրականացման ձեռնարկ (Օրագրի գործառնական ձեռնարկ).

գ) Օրագիրն իրականացնել ըստ Օրագրի գործառնական ձեռնարկի.

դ) Օրագրի իրականացման ընթացքում, Օրագրի փոխադարձ կապի ապահովման եւ բողոքների լուծման նպատակով, մշակել եւ իրագործել հանրությանը հասանելի եւ Միջազգային զարգացման ընկերակցության համար ընդունելի՝ բողոքների քննության մեխանիզմ.

ե) գնահատել, ուսումնասիրել, հաստատել եւ հսկողություն սահմանել Համայնքային հիմնադրամի ենթածրագրերի եւ Նպատակային ենթածրագրերի նկատմամբ.

զ) վարկի հասույթից Օրագրի ներքո ընտրված շահառուներին հատկացնել Նպատակային ենթածրագրի դրամաշնորհներ՝ Միջազգային զարգացման ընկերակցության կողմից հաստատված եւ Օրագրի գործառնական ձեռնարկում նշված պայմաններով.

է) անցկացնել Օրագրի առաջընթացի մշտադիտարկում եւ գնահատում, կազմել եւ Միջազգային զարգացման ընկերակցությանը ներկայացնել Օրագրի հաշվետվություններ՝ Համաձայնագրով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուրութուններորդ (180) օրն է:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի դեկտեմբերի 11-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Համաձայնագրին:

5. Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ դրանց կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում

բազմիցս անդրադարձել է վարկային /փոխառության/ միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Համաձայնագիրը եւս պահանջում է հասցեագրված վերահսկողություն փոխառության միջոցների օգտագործման եւ Ծրագրի իրականացման եւ կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**:

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1187



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑ-ՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի

Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ 2014 թվականի դեկտեմբերի 3-ին եւ 2014 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացմանը» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ «Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացմանը» ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի դեկտեմբերի 3-ին եւ 2014 թվականի դեկտեմբերի 10-ին, համաձայն որի՝ Եվրոպական միությունը՝ հանձնի Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ «Հանձնաժողով») Հայաստանի Հանրապետությանն է (այսուհետ՝ «Շահառու») տրամադրում առավելագույնը 10 000 000 (տասը միլիոն) եվրո գումարի չափով ֆինանսավորում՝ Համաձայնագրում նախանշված ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») կատարմանն օժանդակելու, այն է՝ Հայաստանի մարզերի միջեւ ավելի հավասարակշռված սոցիալտնտեսական զարգացմանն ուղղված առաջընթաց ապահովելու ընդհանուր նպատակով, ընդգրկելով մայրաքաղաքը եւ մարզերը:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում թվով երկու հավելվածներ: Ֆինանսավորման ծրագրային ուղղությունները մանրամասնված են Համաձայնագրի հավելված II-ում:

Ըստ Համաձայնագրի՝ Շահառուն նույնպես 1 750 000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) եվրո գումարի չափով համաֆինանսավորման միջոցով մասնակցելու է վերոհիշյալ Ծրագրի կատարման ֆինանսավորմանը, որի ուղղությունները մանրամասնված են Համաձայնագրի հավելված I-ում:

Ըստ Համաձայնագրի հավելվածների՝ Ծրագրի ֆինանսավորումը 11 750 000 եվրո ընդհանուր գումարի շրջանակներում իրականացվելու է գնման եւ դրամաշնորհային պայմանագրերի միջոցով (հավելված I-ին, 8-րդ հոդված, կետ 8.1): Ընդ որում, եթե Ծրագրի կատարմանը հատկացված

միջոցները չեն կարող կրճատվել, կամ եթե գերաժախսը չի կարող ծածկվել Շահառուի սեփական կամ այլ միջոցներով, Հանձնաժողովը կարող է, Շահառուի կողմից պատշաճ կերպով հիմնավորված դիմումի հիման վրա, Եվրոպական միության միջոցներից լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու որոշում կայացնել (հավելված I-ին, հոդված 2-րդ, կետ 2.3): Համաձայնագրով եւ Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ մատակարարման պայմանագրերի կնքման համար մրցույթի հրավեր եւ հայտեր ներկայացնելու առաջարկ ստանալու իրավունքը հավասար հիմունքներով հասանելի է Եվրոպական միության անդամ պետությունների ֆիզիկական եւ իրավաբանական անձանց եւ շահառու երրորդ երկրների անձանց: Այլ երկրների անձանց կարող է թույլատրվել մասնակցել այդ գործընթացներին՝ համագործակցության տվյալ հատվածը կարգավորող հիմնական ակտերով սահմանված հատուկ պայմանների հիման վրա կայացված որոշման համաձայն (հավելված I-ին, 10-րդ հոդված, կետեր 10.1, 10.2):

Համաձայնագիրը կիրարկող այն պայմանագիրը, որի համաձայն վճարումներ չեն կատարվել, այն ստորագրելուց հետո երեք տարվա ընթացքում ինքնաբերաբար դադարում է գործելուց, իսկ դրա ֆինանսավորումը չեղյալ է հայտարարվում:

Ծրագրի ընդհանուր ուղղվածությունը կանխորոշելու եւ այն գործարկելու նպատակով, Համաձայնագրի հավելված II-ի 2.9-րդ կետի համաձայն, նախատեսվում է ստեղծել ղեկավարող հանձնաժողով:

Համաձայնագրով նախատեսված է վերջինիս՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ (Հատուկ պայմաններ, 8-րդ հոդված):

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- համաֆինանսավորել Ծրագիրը 1 750 000 եվրո գումարի չափով (3-րդ հոդված, կետ 3.1),

- համապատասխան միջոցներ ձեռնարկել Համաձայնագրի դրույթների կատարման խախտումներն ու խարդախությունը կանխելու եւ Հանձնաժողովի պահանջով սխալ վճարված դրամական միջոցները վերադարձնելու նպատակով դատական հետապնդում նախաձեռնելու համար, ինչպես նաև ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի ցանկացած դրսևորում վերացնելու նպատակով ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները պայմանագրերի կնքման կամ դրամաշնորհների տրամադրման գործընթացի ցանկացած փուլում (4-րդ հոդված, կետ 4.3.4, ինչպես նաև հավելված I-ին, 8-րդ հոդված, կետ 8.4),

- անհապաղ տեղեկացնել Հանձնաժողովին ցանկացած խնդրի մասին,

որը խախտման կամ խարդախության կասկած է հարուցում (4-րդ հոդված, կետ 4.3.5),

- միջոցներ ձեռնարկել Համաձայնագրի պայմաններին համապատասխան վճարման պահանջագրերը կամ հաշիվ-ապրանքագրերը Հանձնաժողովին տրամադրելու համար (հավելված I-ին, հոդված 5-րդ, կետ 5.1),

- երաշխավորել, որ Հանձնաժողովի կողմից նախնական ֆինանսավորման կարգով տրամադրված դրամական միջոցները նույնականացվեն Հանձնաժողովի համար ընդունելի համարվող ֆինանսական հաստատությունում բացված բանկային հաշվում (հավելված I-ին, հոդված 7-րդ, կետ 7.3),

- տեղեկացնել Հանձնաժողովին, եթե որեւէ թեկնածու, հայտառու կամ դիմող հայտնվում է պայմանագրերի կնքման ընթացակարգի մասնակցությունից դուրս՝ Եվրոպական միության ընդհանուր բյուջեի համար կիրառելի ֆինանսական կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն, կամ եթե կատարողը մեղավոր է ճանաչվում կեղծ հայտարարություն տալու համար կամ էական սխալներ է կատարել կամ կատարել է խախտում կամ խարդախություն, կամ եթե կոպտորեն խախտել է իր պայմանագրային պարտավորությունները (հավելված I-ին, 8-րդ հոդված, կետ 8.3),

- յուրաքանչյուր տարի իր կայքէջի առանձնացված եւ տեսանելի վայրում կամ պաշտոնական տեղեկագրում հասանելի դարձնել Համաձայնագրով ֆինանսավորվող յուրաքանչյուր պայմանագրի անվանումը, դրամաշնորհի շահառուի կամ մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի անվանումն ու հիմնադրման վայրի երկիրը, ինչպես նաեւ համապատասխան դրամաշնորհի կամ պայմանագրի արժեքը (հավելված I-ին, 11-րդ հոդված, կետեր 11.1 եւ 11.2),

- գնման պայմանագրերի եւ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների նկատմամբ կիրառել հարկային եւ մաքսային առավել բարենպաստ ռեժիմներ, որպիսիք կիրառվում են այն պետությունների կամ միջազգային կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ պետությունն ունի հաստատված հարաբերություններ (հավելված I-ին, 13-րդ հոդված, կետ 13.1),

- Օրագրի իրականացման համար թույլատրել գնելու անհրաժեշտ արտարժույթի ներմուծում կամ գնում (հավելված I-ին, 14-րդ հոդված, կետ 14.1),

- պարբերաբար ստուգել, որ Եվրոպական միության հիմնադրամների հաշվին ֆինանսավորվող գործառնություններն իրականացվեն պատշաճ կերպով (հավելված I-ին, 19-րդ հոդված, կետ 19.1),

- անհապաղ Հանձնաժողովին ներկայացնել տնտեսավարող այն սուբյեկտների անվանումները, որոնց նկատմամբ Եվրոպական միության

Ֆինանսական շահերը վնասող՝ խարդախության, կոռուպցիայի, հանցավոր համագործակցության մեջ ներգրավվելու կամ ցանկացած այլ անօրինական գործողության առնչությամբ կայացվել է վերանայման ոչ ենթակա դատական որոշում (հավելված I-ին, 19-րդ հոդված, կետ 19.5),

- Հանձնաժողովի՝ Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի եւ Առողիտորների եվրոպական դատարանի պաշտոնատար անձանց եւ նրանց լիազորված գործակալներին մուտքի հնարավորություն տալ դեպի այն տարածքներն ու շինությունները, որտեղ իրականացվում են Համաձայնագրով ֆինանսավորվող գործողություններ, ներառյալ նրանց համակարգչային համակարգերը՝ մատչելի դարձնելով այդ գործողությունների տեխնիկական եւ ֆինանսական կառավարմանն առնչվող ցանկացած այլ փաստաթուղթ եւ համակարգիչ մուտքագրված տվյալ (հավելված I-ին, 20-րդ հոդված, կետ 20.3):

3. Համաձայնագրում նախատեսված են նաեւ կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարումն ապահովող այլ դրույթներ:

Համաձայնագրի մի շարք այլ դրույթներով մանրամասնված են նաեւ Հանձնաժողովի եւ Շահառուի միջեւ խորհրդակցությունների անցկացման, հնարավոր վեճերի լուծման, Համաձայնագրում փոփոխություններ կատարելու, դրա գործողությունը կասեցնելու եւ դադարեցնելու գործընթացները:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ծրագրի ֆինանսավորման գործընթացների շրջանակներում Համաձայնագրով նախատեսված վերահսկողական բնույթի միջոցները որոշակի երաշխիք են Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունների բարեխիղճ կատարումն ապահովելու համար: Այդ պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին եւ բխում են պետության առջեւ դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ 2014 թվականի դեկտեմբերի 3-ին եւ 2014 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացմանը» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտա-

վորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1188



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՄՈՒՍԱԼԵՌ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ՝ ՄՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ
2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ս. Ցականյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որո-

շելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Մուսալեո» Տպագրատուն» ՍՊԸ-ի՝ 2014 թվականի հունիսի 17-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Մանկության մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ից:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է. «Այդ դեպքում գործն ավարտելու պահից վերանում են սույն օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով և 19-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված կասեցումները: Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը 01.02.2013թ. հայց է ներկայացրել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ «Արմավիրի կաթի գործարան» ՓԲԸ-ի՝ 1.073.940 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին (քաղ. գործ թիվ ԱՐԴ/0068/02/13):

20.06.2013թ. դատարանի կողմից կայացվել է վճիռ, որով դատարանը հաստատված համարելով հանդերձ պատասխանող ընկերության մոտ առկա 1.073.940 ՀՀ դրամ գումարի պարտքը, հայցադիմումը մերժել է՝ հիմք ընդունելով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, այն է՝ պարտապան հանդիսացող «Արմավիրի կաթի գործարան» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ, առողջացել է, իսկ դիմողն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմում չի ներկայացրել սնանկ ճանաչված ընկերության պարտատերերի ցանկում ընդգրկվելու համար:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ

Սահմանադրության 8-րդ, 31-րդ և 18-րդ հոդվածներին, քանի որ վիճարկվող դրույթում բացակայում են սեփականության իրավունքից զրկման համար անհրաժեշտ՝ օրենքով նախատեսված օբյեկտիվ հիմքերը, և նման կարգավորումն ըստ էության առանց պահանջատիրոջ համար պատշաճ դատական ընթացակարգ ապահովելու, առանց վերջինիս՝ իր իրավունքների և շահերի պաշտպանության հնարավորությունն ընձեռելու դատական ակտի կայացման է բերում: Դիմողի կարծիքով՝ հաշվի առնելով վիճարկվող իրավակարգավորումը՝ սնանկության գործը քննող դատարանը սնանկացման գործով կայացնում է դատական ակտ, որով սնանկացած և առողջացած անձին ազատում է նախկին պարտավորությունների հանդեպ պատասխանատվությունից, ինչն ըստ էության պարունակում է գործով մասնակից չդարձած անձին՝ իր գույքի (ներառյալ դրամը և գույքային պարտավորությունները) սեփականության իրավունքից զրկելու վերաբերյալ դրույթներ: Իսկ հետագայում հանգեցնում է նրան, որ անձը, ով օբյեկտիվորեն տեղեկացված չի եղել իր պարտապանի սնանկության գործընթացում գտնվելու մասին դատական գործընթացի վերաբերյալ, որն առնչվել է նաև իրեն, փաստացի զրկվում է օրենքով պահպանվող իր սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունից, իսկ որևէ այլ իրավական գործիք, որը հնարավորություն կտար պարտատիրոջը ՀՀ քաղ. օր.-ի 14-րդ հոդվածով նախատեսված որևէ եղանակով հասնել իր իրավունքների պաշտպանության, չկա: Դիմողը նաև գտնում է, որ պարտապան ընկերության՝ սնանկության մասին կատարված հայտարարության վերաբերյալ տեղեկացված չլինելը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքին համապատասխան դիմում չներկայացնելը չի կարելի հիմք համարել գույքի նկատմամբ սեփականության իրավունքից զրկելու համար, քանզի պարզ է, որ «ՀՀ-ում չկա որևէ իմպերատիվ նորմ», որով պարտադրվում է քաղաքացիական շրջանառության սուբյեկտներին ամեն օր հետևել մամուլին կամ ներկայումս «www.azdarar.am» կայքին, ավելին՝ կարդալ դրա յուրաքանչյուր հայտարարություն և տող, որն իրատեսական չէ: Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավական նորմը բերում է հակասության նաև ընդհանուր քաղաքացիաիրավական շրջանառության ընդունված կանոնների՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդված) հետ, քանզի ստեղծվում է մի իրավիճակ, երբ ընդհանուր կարգով անձին տրվում է օրենքով սահմանված ժամկետ իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար (հայցային վաղեմության ինստիտուտ), որի շրջանակներում իր իրավունքների պաշտպանության համար անձն ազատորեն կարող է ընտրել օրենքով սահմանված կամ չարգելվող որևէ վարքագիծ և դրան զուգահեռ մեկ այլ նորմով, որով ոչ օբյեկտիվ կերպով և անուղղակիորեն սահմանափակվում է այդ

հնարավորությունը: Դիմողը նաև գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի այդ նորմի կարգավորումը որոշակիորեն հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթին, քանզի անձի համար պայմանավորում է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացում՝ առանց օրենքով ուղղակիորեն սահմանված պարտականությունների խախտման դեպքի կամ դեպքերի նախատեսման, այլ կերպ ասած՝ այդ նորմով անձի վրա դրվում է օրենքով ուղղակիորեն չնախատեսված պարտականություն՝ հետևել մամուլի բոլոր հրապարակումներին և «www.azdarar.am» կայքին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ վիճարկվող դրույթը չի հանդիսանում սեփականության անձեռնմխելիության իրավունքի խախտում և դրա նախատեսումը պայմանավորված է սնանկության վարույթի շրջանակներում իրավական որոշակիության, կանխատեսելիության սկզբունքների իրագործման անհրաժեշտությամբ: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև հայցային վաղեմության քաղաքացիաիրավական ինստիտուտի վերլուծության արդյունքում պատասխանողը հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք այլ իրավակարգավորումներ ևս պարտատիրոջ կողմից որոշակի ժամկետում պարտապանին պահանջ չներկայացնելու դեպքում զրկում են դրանք բավարարելու հնարավորությունից, որի արդյունքում պարտատիրոջ սեփականության իրավունքը փաստացի սահմանափակվում է: Մակայն օրենսդրորեն նշված ժամկետների սահմանումը չի կարող որակվել որպես սեփականության անձեռնմխելիության իրավունքի խախտում, այլ հակառակը՝ դրանց սահմանումը բխում է իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից, և նման կարգավորումների նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովել քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց իրավունքների և պարտավորությունների ժամանակին և պատշաճ իրականացումը, քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը: Պատասխանողը գտնում է, որ նման կարգավորման բացակայության դեպքում արդեն իսկ առողջացած կազմակերպությանը նախկինում չառաջադրված պահանջներ ներկայացնելու հնարավորություն կատեղծվի, իսկ պարտապանի ֆինանսական առողջացմանը կրկին անգամ կարող է հաջորդել սնանկության վարույթի վերսկսումը, ինչը կարող է անարդյունավետ և անիմաստ դարձնել նրա հանդեպ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների համալիրը, հանգեցնել դատական համակարգի ծանրա-

բեռնմանը և վնասել գործարար միջավայրին: Պատասխանողի կարծիքով, եթե պարտատերը սնանկության գործընթացում գտնվող պարտապանին չի դիմում և պահանջում իր նկատմամբ գոյություն ունեցող պարտավորությունների կատարում, ապա նա ըստ էության իր գործողություններով իրականացնում է պարտքի ներում, և այդ դեպքում օրենքի տեսանկյունից ևս չի կարևորվում, թե ինչ պատճառով պարտատերը նման պահանջներ չի ներկայացրել՝ անտեղյակ լինելու, թե՛ պարտքից իրականում հրաժարվելու:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ գործի նյութերի՝ դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքներ է առաջացրել օրենքի վիճարկվող պարբերության՝ «...և այդ պարտատերերը գրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթի՝ նրա նկատմամբ կիրառումը:

Վերոնշյալ դրույթի սահմանադրականության հարցը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող կանոնակարգումը նախ դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրությամբ երաշխավորված անձի սեփականության իրավունքի լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև՝ նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, *Trgo v. Croatia*, 2009թ. հունիսի 11-ի վճիռ):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումից և դիմումին կից ներկայացված նյութերից պարզ է դառնում, որ դիմողը սնանկության գործով պարտապանի հետ կնքել է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն պարտապանին մատուցել է տպագրական ծառայություններ, իսկ պարտապանը պարտավորվել է վճարել այդ ծառայությունների համար, սակայն ամբողջությամբ չի կատարել իր պարտավորությունները: Հետևաբար, դիմողն իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց համապատասխան նյութական

միջոց ստանալու իրավաչափ ակնկալիք ուներ:

Վիճարկվող կանոնակարգումը, որոշ բացառություններով (օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր), ազատում է պարտապանին պարտավորությունների կատարման պարտականությունից ֆինանսական առողջացման գործընթացից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը» վերտառությամբ 345-րդ հոդվածի համաձայն. «1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից»:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պարտապանը չի կարող ազատ ճանաչվել՝

«ա) ալիմենտների վճարումից.

բ) սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից.

գ) կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից.

դ) հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորություններից»:

Վերոնշյալ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն առողջացած սուբյեկտին ազատում է հիմնականում պայմանագրերից բխող պարտավորություններից, իսկ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում պայմանագրային պարտավորությունների մեծ մասը՝ ըստ պարտավորության օբյեկտի (վճարել դրամ, հանձնել գույք կամ կատարել աշխատանք, մատուցել ծառայություն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից), կրում է ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային բնույթ:

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցերին: Մասնավորապես, ՄԴՈ-903, այնուհետև՝ ՄԴՈ-1073 որոշումներում դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս

հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ., 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ., 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

«Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է ՄԴՈ-630 որոշման մեջ, որում սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Հաշվի առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,

- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավագործությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման:

Քննության առնելով դիմողի համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմը որևէ առնչություն չունի անձին պատասխանատվության ենթարկելու, հետևաբար՝ նաև սեփականագրկման հետ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը պայմանավորում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու առաջնահերթ անհրաժեշտությամբ: Դրանք են՝ շրջակա միջավայրը, այլ անձանց, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված,

սակայն ոչ բացարձակ:

Մահմանադրական դատարանն իր՝ 25.02.2008 թվականի ՄԴՈ-735 որոշման մեջ արտահայտել է նաև հետևյալ դիրքորոշումը. «Մանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը»:

Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող կանոնակարգումը կարող էր ուղղված լինել պարտապանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միայն սնանկության գործընթացում, որը ներառում է նաև ֆինանսական առողջացումը՝ նպատակ ունենալով զերծ պահել պարտապան հանդիսացող սուբյեկտին պարտատերերի կողմից ներկայացվող պահանջներից, որպեսզի վերջինս ֆինանսապես վերականգնվի, վճարունակ դառնա, լիարժեք մասնակցի քաղաքացիական շրջանառությանը, ինչը չի կարող արդարացված լինել նույն նպատակներով սնանկության գործի ավարտից՝ նրա ֆինանսական առողջացումից հետո, երբ առողջացած կազմակերպությունը դառնում է քաղաքացիական շրջանառության և քաղաքացիաիրավական հարաբերությունների լիարժեք մասնակից: Դրա մասին է վկայում նաև օրենքում գործածվող «ֆինանսական առողջացման ծրագիր» հասկացության սահմանումը, որի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելու մասին վճիռ (հոդված 59):

6. «Մանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթի վերլուծությունից հետևում է, որ.

1. ոչ միայն առողջացած անձն ազատվում է ավարտված սնանկության գործի շրջանակներում չներկայացված պահանջներով պայմանավորված բոլոր պարտավորություններից, այլև իրավունքի ուժով տվյալ

պարտատերերը զրկվում են հետագայում այդ անձի նկատմամբ նշված պարտավորությունների մասով ցանկացած՝ այդ թվում դատական կարգով, պահանջ ներկայացնելու իրավունքից, եթե այդպիսին չի բխում օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունից,

2. առկա են նաև բացառություններ.

ա/ եթե սնանկության գործն ավարտվել է սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, ապա պարտապանը չի ազատվում բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում,

բ/ պարտապանը օրենքի ուժով չի կարող ազատվել այնպիսի պարտավորություններից, ինչպիսիք են՝ ալիմենտների վճարումը, սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումները, կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորությունները:

Իրավատրամաբանական վերոնշյալ մոտեցման շրջանակներում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից պատասխան չի տրվում երկու հարցի.

1. ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված անձը սնանկության գործի շրջանակներում պահանջներ չի ներկայացրել,

2. արդյո՞ք առկա չէ խտրականության դրսևորում, երբ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, սակայն հարկային պարտավորությունների կատարման առումով բացառություն է նախատեսվում:

Այս հարցերի պատասխանները հնարավոր է տալ քննության առարկա օրենքի մի շարք այլ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում: Մասնավորապես, դա վերաբերում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19, 33, 34, 42, 46, 69, 74 և 89-րդ հոդվածներին: Դրանցում նախատեսված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ.

1. պարտատերերի համար պատշաճ ծանուցում է համարվում <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությունը (հոդվ. 34),

2. եթե պարտատերը, անկախ պատճառից, պարտատերերի առաջին ժողովին չի մասնակցել, ապա հետագայում զրկվում է քվեարկության ձայնի իրավունքից (հոդվ. 33),

3. օրենքի 29, 33, 42, 46, 52, 69 և 87-րդ հոդվածներով նախատեսված՝ պարտատերերի պահանջների գրանցամատյանի կազմման, հաստատման և վարման կարգի ուսումնասիրությունը վկայում է, որ որևէ հստակ պարտավորություն չի դրվում պարտապանի վրա պարտատերերի հանդեպ իր պարտավորությունների ներկայացման առումով: Բոլոր այն պարտատերերը, ովքեր որևէ պատճառով չեն տեղեկացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը կամ չեն համարվում պահանջների ընդհանուր ծավալում ամենախոշոր պահանջ հաշվառած պարտատերեր, ապա գրկվում են իրենց իրավունքների հետագա պաշտպանության իրավական հնարավորություններից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը ոչ միայն պարտատերերի իրավունքների ոտնահարման իրական վտանգ է պարունակում, այլև մեծ են նաև կոռուպցիոն ռիսկերը: Առաջին հերթին սնանկացման հայտ ներկայացնելիս պարտապանն է պարտավոր հստակ ներկայացնել իր պարտավորությունների իրական պատկերը: Դա կբացառի նաև պարտատերերի կողմից գույքի թաքցնումը կամ անհիմն նվազեցումը, ինչի մասին շեշտվում է նաև Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում սնանկության խնդրի լուծման վերաբերյալ 2014թ. ներկայացված զեկույցի համառոտագրի 9-րդ և հիմնական զեկույցի 36-րդ կետերում:

Նշված իրական պատկերին համապատասխան պետք է կազմվի պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ դրանում իրավունքի ուժով ներառելով պարտապանի կողմից իրավաբանորեն ճանաչված բոլոր պարտավորությունները՝ չբացարձականացնելով հայեցողական մոտեցումը: Օրենսդրական կարգավորումն առավելապես պետք է հենվի այն մոտեցման վրա, որ սնանկության կառավարիչն առաջին հերթին պետք է գործի պարտապանի կողմից տրված տեղեկատվության հիման վրա, ինչը համապատասխան պարտավորվածություն կառաջացնի նաև պարտապանի համար: Բացի դրանից, բոլոր այն պարտատերերը, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն ծանոթացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը, հետագայում դատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության հնարավորություն պետք է ունենան: Հակառակ պարագայում, ոչ միայն ոտնահարվում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված նրանց իրավունքները, այլև խախտվում են համամասնականության և համաչափության սահմանադրական սկզբունքները՝ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված բացառությունների առումով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ շահա-

գրգիռ սուբյեկտների կողմից սնանկության գործընթացի մասին պատշաճ ծանուցված լինելը վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non*/ պայման, առանց որի հնարավորը չէ/ կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստի ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սնանկության գործընթացում գտնվող սուբյեկտի (պարտապանի) բոլոր պարտատերերի հայտնաբերմանը և վերջիններիս Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի արդյունավետ ծանուցման և պարտավորությունների գրանցման ընթացակարգ, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները: Խնդիրն այն է, որ պարտատերը պատշաճ ծանուցում պետք է ստանա սնանկության վարույթի բացման և պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության մասին: Իսկ պարտապանը պետք է օրենքով սահմանված կարգով հստակ ու ամբողջական տեղեկատվություն ներկայացնի իր պարտավորությունների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում նաև սնանկության գործընթացի շրջանակներում առողջ ճանաչված պարտապանին ընտրողաբար պարտավորություններից ազատելը, քանի որ վիճարկվող իրավակարգավորումը տարբերակված մոտեցում է նախատեսում հարկային պարտավորությունների պարտատեր հանդիսացող պետության և այլ տեսակի պարտավորությունների պարտատերեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «...և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթը՝ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 4-րդ մասի հետ, այն մասով, որով դատարանի կողմից հարգելի ճանաչված դեպքերում բացառություն չի նախատեսում նաև

ավարտված սնանկության գործի շրջանակներում պահանջ չներկայացրած պարտատերերի համար, նրանց նկատմամբ սահմանելով իրավունքի պաշտպանության ոչ համաչափ սահմանափակում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27 հունվարի 2015 թվականի
ՍԴՈ-1189



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի,
Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի
(զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի ՀՀ վճռաբեկ դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ
հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
ՀՀ օրենքի 25, 38 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատարանի
դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի
131-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գոր-

ծր:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը» վերտառությամբ 131-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետեւյալ միջանկյալ դատական ակտերը.

- 1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.
- 2) հայցադիմումը վերադարձնելու մասին.
- 3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.
- 4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.
- 5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.
- 6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.
- 7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.
- 8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաեւ երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.
- 9) սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.
- 10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.
- 11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

«Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան անվավեր կամ առ ոչինչ ճանաչել «ՀՀ ՊԵԿ տեսուչների կողմից հարկային հաշվանցումների ել/կամ վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության վերաբերյալ 13.08.2013թ. կազմված թիվ 1415455 ուսումնասիրության արձանագրությունը»: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ պահանջելով «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.898.915 ՀՀ դրամ:

17.02.2014թ. ՀՀ վարչական դատարանի որոշմամբ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ի սկզբնական հայցն «ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 13.08.2013թ. թիվ 1415455 ուսումնասիրության արձանագրությունն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասով» ամբողջությամբ կարճվել է, իսկ ՀՀ վարչական դատարանի վճռով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության հակընդդեմ հայցն ընդդեմ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ի՝ հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.898.915 ՀՀ դրամ, ամբողջությամբ բավարարվել է:

«Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին» ՀՀ վարչական դատարանի՝ 17.02.2014թ. թիվ ՎԴ3/0347/05/13 որոշման դեմ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.04.2014թ. որոշմամբ հիշյալ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է նաև այն հիմնավորմամբ, որ «Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ «Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին» որոշումը հանդիսանում է միջանկյալ դատական ակտ, իսկ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել բացառապես միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված է տվյալ ակտի վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը: Մինչդեռ վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը նշված հոդվածով սահմանված չէ որպես բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ»: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից ներ-

կայացվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի 30.07.2014թ. որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ, իսկ 09.10.2014թ. կայացվել են «Գործի վարույթը կասեցնելու մասին» եւ «ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումները:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով բացառում է վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին:

Դիմողը, վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, նշում է, որ գործող վարչական դատավարության օրենսդրությունը չի նախատեսում գործի վարույթը կարճելու որոշման բողոքարկման իրավական հնարավորություն: Ըստ դիմողի՝ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը:

ՀՀ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք որոշումներում եւ վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը գտնում է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացակայությունն անհաղթահարելի արգելքներ է առաջացնում գործի հետագա քննության համար, որոնք կարող են հանգեցնել մարդու հիմնական իրավունքների խախտման, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Հետեւաբար, վարչական դատարանի կողմից գործի վարույթը կարճելու մասին որոշումը բողոքարկելու անհնարինության արդյունքում, ըստ էության, բացառվում է անձանց մի շարք հիմնարար իրավունքների գործնականում իրացումը, առաջանում է ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ եւ 13-րդ հոդվածներում նախատեսված արդար դատաքննության եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների հնարավոր խախտման իրական վտանգ:

4. Սույն գործով վիճարկվող իրավակարգավորման եւ բարձրացված

սահմանադրաիրավական վեճի վերաբերյալ պատասխանող կողմը, մասնավորապես, հայտնում է, որ գործի վարույթը կարճելու մասին դատարանի պետաիշխանական կամքն իր արտաքին ձեռնարկումն է ստանում որոշման տեսքով, սակայն այն իր դատավարական նշանակությամբ համարժեք չէ միջանկյալ դատական ակտերին եւ չի կարող դասվել վերջիններիս շարքին: Պատասխանողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը սպառնիչ սահմանում է անմիջական բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի ցանկը եւ ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Գործի վարույթը կարճելու մասին որոշումը պետք է դիտարկել որպես դատական քննության տվյալ փուլը եզրափակող վերջնական ակտ եւ բողոքարկել գործն ըստ էության լուծող դատական ակտերի համար նախատեսված կարգով: Պատասխանող կողմը հայտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրը լուծելու նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004) 20 հանձնարարականով նախատեսված մոտեցումները՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-573-01.08.2014, 29.09.2014-ՊԻ-010/0), որով նախատեսվում է գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված կանոններով:

5. Քննության առարկա գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը բարձրացնում է **միայն այնքանով, որքանով այն բացառում է վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման ենթակա լինելը եւ չի բարձրացնում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության այլ հարցեր**: Հետեւաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը, սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը քննության է առնում բացառապես գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման սահմանադրականության գնահատման տեսանկյունից:

6. Սույն գործի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական

դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել պարզել եւ գնահատել.

- գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման տեղը գործն ըստ էության լուծող դատական ակտերի եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի համակարգում,

- քննության առարկայի շրջանակներում դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածությունը եւ ապահովումը,

- գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորության բացակայության ազդեցությունը վարչական արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացումն ապահովելու վրա՝ ելնելով որպէս իրավական կողմնորոշիչ հանդիսացող այն մոտեցումներից, որոնք բխում են դատական բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից:

7. Գործի վարույթը կարճելու հետ կապված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է գործի վարույթը կարճելու հիմքերը, կարգը եւ հետեւանքները: Մասնավորապէս, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանվում է գործի վարույթը կարճելու հիմքերը, այդ թվում՝ նաեւ եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը (1-ին մասի 10-րդ կէտ): Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում: Համաձայն հիշյալ օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 125-րդ հոդվածի 6-րդ մասի՝ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին: Այսպիսով, գործի վարույթը կարճելու դեպքում դատարանը կայացնում է որոշում, բացառությամբ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելու, որի դեպքում կայացնում է վճիռ:

Վերոշարադրյալին զուգահեռ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրորեն չի ամրագրվել, թե վարչական

դատարանի ինչպիսի դատական ակտ է հանդիսանում գործի վարույթը կարճելու մասին որոշումը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի երկու տեսակ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները» վերտառությամբ 125-րդ հոդվածում գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ, սահմանված չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ օրենսդիրը նույն հոդվածի 6-րդ մասով սահմանելով, որ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին կայացնում է վճիռ՝ այն դիտարկում է որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Ինչ վերաբերում է գործի վարույթը կարճելու որոշման եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի հարաբերակցությանը, ապա օրենսդիրն ուղղակիորեն չի ամրագրել, որ գործի վարույթը կարճելու որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: Հարկ է նշել, որ հիշյալ իրավական անորոշությունը խնդիրներ է առաջացնում նաեւ իրավակիրառական պրակտիկայում, որը փաստվում է դիմող կողմի այն մոտեցմամբ, որ «...թեեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իմաստով վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը համարվում է միջանկյալ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտ, սակայն այն իր իրավաբանական հետեւանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին»: Ի դեպ, հարկ է նշել նաեւ, որ պատասխանող կողմը եւս փաստում է իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդրի եւ այն լուծելու անհրաժեշտության մասին:

Հետեւաբար, վերոնշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության գործող իրավակարգավորումների պայմաններում հստակեցված չէ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի (բացառությամբ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում գործի վարույթը կարճելու մասին վճռի) տեղը գործն ըստ էության լուծող դատական ակտերի եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի համակարգում: Չնայած այն հանգամանքին, որ ըստ պատասխանող կողմի՝ «Գործի վարույթի կարճումը վարույթն ավարտելու ինքնուրույն ձեւ է, որն իր դատավարական ձեւակերպումն ստանում է որոշման տեսքով, ուստի կարճելու մասին որոշումը կարող է բնորոշվել որպես վարույթը եզրափակող

դատական ակտ», այն իր հստակ օրենսդրական ձևակերպումը չի ստացել: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է սահմանել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական կարգավիճակը: Այն պարագայում, եթե գործի վարույթը կարճելու մասին դատական ակտն օրենսդիրն համարի լիովին այլ կատեգորիայի ակտ, ապա անհրաժեշտ կլինի նման մոտեցումը լիարժեքորեն ներմուծել առկա փոխկապակցված բոլոր իրավակարգավորումներում (այդ թվում՝ ուժի մեջ մտնելու, բողոքարկման ժամկետների հետ կապված)՝ նպատակ ունենալով ապահովել այդ իրավակարգավորման համակարգային ամբողջականությունը եւ տրամաբանական փոխկապակցվածությունը: Միեւնույն ժամանակ, անկախ գործի վարույթը կարճելու մասին որոշման իրավական կարգավիճակից, պետք է համապատասխան իրավակարգավորումներով սահմանվեն այդ ակտի բողոքարկման հնարավորությունը եւ դրա իրացումն ապահովող անհրաժեշտ այլ հարաբերությունները:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (131-րդ հոդված) սահմանում է այն միջանկյալ դատական ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է: ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.11.2010թ. ՄԴՌ-922 որոշմամբ ամրագրել է, որ «...օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», եւ միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է եւ ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված եւ շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջեւ ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ, մի կողմից, օբյեկտիվորեն հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման՝ «հետաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկումը, իսկ մյուս կողմից՝ գործող

իրավակարգավորումների պայմաններում բացակայում է գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման շրջանակներում վերանայման հնարավորությունը: Այլ կերպ ասած, ամրագրելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ բացառելով նաև դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, **մինչդեռ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:**

9. Սույն գործով առաջադրված սահմանադրաիրավական հարցի շրջանակներում, մի կողմից, ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքի եւ ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի եւ, մյուս կողմից՝ ՀՀ վարչական դատավարության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքերի համանման իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա) ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքի իրավակարգավորումները նախատեսել են գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, ինչն իրավակիրառական պրակտիկայում, մինչեւ ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի ուժի մեջ մտնելը, իրացվել է.

բ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներով՝ գործի վարույթի կարճման բոլոր հիմքերի դեպքում էլ դատարանը կայացնում է վճիռ (110-րդ հոդվածի 1-ին մաս) եւ այս իրավակարգավորմամբ պայմանավորված՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը դառնում է բողոքարկելի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված ընդհանուր իրավադրույթներին համահունչ: Հիշյալ իրավակազավորումը իրավակիրառական պրակտիկայում իրացվում է:

Ի դեպ, հարկ է նշել, որ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքի դրույթների սահմանադրականության հարցերը (մասնավորապես, 25.11.2008թ. ՍԴՈ-780, 13.04.2010թ. ՍԴՈ-873 որոշումներով), արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության արդյունավետ իրականացման, ինչպես նաև վարչական դատարանի ակտը

բողոքարկելու իրավունքի երաշխավորման առումով:

Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը եւ լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մակայն դատավարական որեւէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ:

10. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19-րդ եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի եւ միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնարարություններով:

ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր բազմաթիվ որոշումներում (մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-780, ՍԴՈ-873, ՍԴՈ-936, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1037) դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության եւ ապահովման վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները: Հիշյալ որոշումներով անդրադառնալով նաեւ դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովման, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում, անհրաժեշտությանը՝ խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու եւ ապահովելու տեսանկյունից, սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետեւյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, եւ արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը

հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը» (ՄԴՈ-719),

բ) «... սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (ՄԴՈ-936),

գ) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման եւ գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար եւ հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու եւ շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից» (ՄԴՈ-936),

դ) «Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական եւ էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս

դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով եւ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին աստանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից եւ արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (ՄԴՈ-1037):

Հարկ է նաեւ ընդգծել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն մեծապես կարեւորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնե կարելու գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս աստան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս աստանին»: Հանձնարարականը նաեւ ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը եւ դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,

- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Հանձնարարականի բացատրական հուշագրում, մասնավորապես, նշված է, որ ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները եւ բողոքարկման մարմնի իրավագործությունը, որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին: Վարչական վարույթում վերադաս դատական աստանի ներգրավումն էական նշանակություն ունի վարչական նախադեպային իրավունքի հետեւողականությունն ապահովելու հարցում:

11. Սույն գործով քննության առարկա հարցը դիտարկելով, մի կողմից, ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների, մյուս կողմից՝ կատարված իրավական վերլուծությունների լույսի

ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է.

նախ՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի հետ կապված իրավահարաբերությունների՝ տվյալ դեպքում բողոքարկման ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված հստակ եւ հետեւողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրը բավարար հետեւողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցի մասով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ եւ համահունչ զարգացնելու առումով, չի ապահովել իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, ճշգրտության եւ կանխատեսելիության որակները: Ավելին, իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումները՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման մասով, ընդհանուր առմամբ խնդիրներ չեն հարուցել, սակայն Ազգային ժողովը ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով այլ մտեցում է որդեգրել, որով չեն իրացվել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները,

երկրորդ՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական ամրագրման բացակայությունն արգելափակում է ոչ միայն դատարանի մատչելիության իրավունքը, այլեւ անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքից: Գործի վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավունքի նորմատիվ ամրագրումը կրնողայնի արդյունավետության եւ օբյեկտիվության նկատմամբ հանրային վստահությունը, կապահովի խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը, թույլ կտա վերադաս ատյանի դատարանին վերացնել ստորին ատյանի թույլ տված դատական սխալները, ուղղված կլինի վերադաս դատական ատյանների մատչելիության ապահովմանը եւ կնպաստի դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությանը: Դատական բողոքարկման իրավունքը վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է, որը հետեւողականորեն պետք է իր արտացոլումը գտնի օրենսդրության մեջ՝ նախատեսելով գործի վարույթը կարճելու մասին որոշման վերանայման համապատասխան ընթացակարգեր:

Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում

եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-573-01.08.2014, 29.09.2014-ՊԻ-010/0), որով, ի թիվս այլ հարցերի, նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1. մասով. «2.1. Գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով»:

12. Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա իրավակարգավորումներով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաեւ դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական եւ միջազգային իրավական չափանիշներին, նաեւ ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, սահմանադրական դատարանն էական է համարում այն հարցադրումը, թե գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկելիության տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, թե՛ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին բնորոշ իրավակարգավորումներին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշմամբ դատավարությունը՝ որպես այդպիսին, եւ վարույթը՝ որպես ընթացակարգ, ավարտվում են, որպիսի պայմանը բացառում է վարույթի հետագա վերսկսումը: Բացի դրանից, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր առաջացրած իրավական հետեւանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Հետեւաբար, մինչեւ ՀՀ Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ եւ ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ **գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով՝ առաջնորդվելով մարդու եւ քաղաքացու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների եւ**

ագատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի եւ դրա կարեւոր բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, **իրավունքի աղբյուր** են դառնում իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները պետք է դրվեն ինչպես իրավակիրառական պրակտիկայի, այնպես էլ օրենսդրական զարգացումների հիմքում:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 փետրվարի 2015 թվականի
ՄԴՈ-1190



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԼԱՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 314.1-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱ ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Ս. Պողոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սլավիկ Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(76)2015
101

վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Սլավիկ Պողոսյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 314.1-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«Հոդված 314.1. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները

8. Դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը հրապարակման պահից ուժի մեջ է: Դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի որոշումները կարող են բողոքարկվել հրապարակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում»:

Վերոհիշյալ իրավակարգավորումը գործողության մեջ է դրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21.02.2007թ. ՀՕ-93-Ն և 08.02.2011թ. ՀՕ-44-Ն օրենքներով:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴ1/0026/01/14 քրեական գործով 2014 թվականի մայիսի 20-ի նիստի ընթացքում փաստաբանի օգնական Սլավիկ Պողոսյանի նկատմամբ որպես դատական սանկցիա է կիրառվել դատական նիստերի դահլիճից հեռացումը: Դատական սանկցիա կիրառելու որոշման դեմ 2014 թվականի մայիսի 30-ին դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, ինչը ՀՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի որոշմամբ առանց քննության է թողնվել այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման: ՀՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի որոշման դեմ դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ

վերադարձվել է:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին՝ պատճառաբանելով, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության արդյունավետ միջոցներով վերականգնելու իր խախտված իրավունքները: Մասնավորապես, ինչպես գտնում է դիմողը, սովյալ դեպքում իրավական պաշտպանության միակ և արդյունավետ հնարավոր միջոցն իր նկատմամբ կայացված դատական ակտի անմիջական բողոքարկումն է, քանի որ որևէ այլ ձևով, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում («հետաձգված բողոքարկում»), անհնար է վերականգնել իր խախտված իրավունքները: Միաժամանակ, ինչպես գտնում է դիմողը, սկզբունքորեն գոյություն ունի վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի կայացրած «ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն»: Հետևաբար, ինչպես եզրակացնում է դիմողը, ինքն իրավունք ունի իր նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը, որով հեռացվել է դատական նիստերի դահլիճից, վերադաս դատարան բողոքարկելու միջոցով վերականգնել իր խախտված իրավունքները:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քրեական դատավարության մասնակիցները, որպես վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտներ, նիստերի դահլիճից հեռացնելու ձևով դատական սանկցիայի կիրառման իրավաչափության հարցը կարող են քննարկման առարկա դարձնել գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակներում՝ գործի հրապարակային քննության իրավունքի համատեքստում: Մինչդեռ այդպիսի սանկցիա կիրառելու վերաբերյալ որոշումը քրեական դատավարության այլ սուբյեկտների, այդ թվում՝ դատական նիստին ներկա գտնվող անձանց կողմից բողոքարկելու իրավունք օրենսդիրը չի նախատեսել, քանի որ «դրանք, ըստ էության, էականորեն չեն շոշափում վերջիններիս շահերը», և այն «կհակասի քրեական դատավարության նպատակներին»:

Անդրադառնալով փաստաբանի օգնականի կարգավիճակին՝ պատասխանող կողմը գտնում է, որ այն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերվում պարզեցված կարգով, վերաբերում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի «վերաբերյալ կարգավորումներին», և որ դատական վարույթին վերաբերող «առավել կարևոր գործառնությունների իրականացման հարցում» փաստաբանի օգնականի համար սահմանվել են «արգելքներ», հետևաբար՝ «քրեական դատավարությունում փաստաբանի օգնականը

չունի կողմի կարգավիճակ, ուստի չի կարող օգտվել փաստաբանի իրավունքներից»: Արդյունքում՝ պատասխանող կողմը գտնում է, որ ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, դիմողն ըստ էության բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը որոշելիս նախնառաջ հաշվի առնել.

- դիմումի առարկա հանդիսացող վեճի շրջանակներում անձի դատավարական իրավունքների օրենսդրական սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը՝ ելնելով տվյալ անձի թե՛ ընդհանուր իրավական և թե՛ դատավարական կարգավիճակի առանձնահատկություններից ու այդ բնագավառում ձևավորված միջազգային իրավական փորձից,

- անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, այդ թվում՝ դատական մատչելիության, արդար դատաքննության երաշխավորման շրջանակները, դիտարկելով այն վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսված դատական ընթացակարգի առանձնահատկությունների համատեքստում,

- վեճի առարկա իրավադրույթի, վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի, ինչպես նաև իրավակարգավորման միևնույն բնագավառի իրավական այլ ակտերի կիրառման իրավաչափության հարցի շրջանակներում սահմանադրական օրինականության պահպանման անհրաժեշտությունը:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ինչպես սահմանված է վերջինիս 2-րդ և այլ հոդվածներում, ի թիվս այլ խնդիրների, կոչված է երաշխավորելու անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանրորեն առավել վտանգավոր (հանցավոր) արարքներից: Այդ օրենսգրքի համապատասխան նորմերը կոչված են սահմանելու իրավասու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից քրեական գործերով վարույթի իրականացման կարգը, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Այսպիսով, քննության առարկա օրենսգիրքը կոչված է երաշխիք հանդիսանալու հանրային-իրավական այնպիսի կարևորություն ունեցող խնդիրների լուծման համար, որպիսիք անմիջականորեն բխում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և բազմաթիվ այլ հոդվածների պահանջներից: Հիշյալ խնդիրների լուծումը ենթադրում է ոչ միայն դրանց նորմատիվ հաստատագրում, այլև իրավական համապատասխան ընթացակարգերի և վերջիններիս իրականացման բավարար ու անհրաժեշտ պայմանների երաշխավորում, այդ թվում՝ արդարադատության իրականացման բնագավառում: Այսինքն՝ քրեական վարույթի իրականացման այնպիսի փուլում, որի շրջանակներում իրավական վերջնական գնահատական է տրվելու անձի քննության առարկա վարքագծին, և անհրաժեշտության դեպքում կիրառվելու է քրեական օրենքով սահմանված պետական հարկադրանքի այս կամ այն միջոցը: Այդպիսի նպատակի իրականացմանն է կոչված սույն գործով վեճի առարկա իրավակարգավորումը, քանի որ նախատեսված է հարկադրանքի համապատասխան միջոցի կիրառման հետ կապված հարաբերությունների կարգավորմամբ երաշխավորելու դատական նիստի բնականոն ընթացքը՝ այն ընթացակարգի շրջանակներում, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես, օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

- նախազգուշացում,
- նիստերի դահլիճից հեռացնելը,
- դատական տուգանք,
- պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

Միաժամանակ, օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է հարկադրանքի այդ տեսակների կիրառման կոնկրետ իրավապայմանները, մասնավորապես՝ թվարկված սանկցիաները պետք է համաչափ լինեն արարքի ծանրությանը և նպատակ հետապնդեն

ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը, կիրառվեն կոնկրետ (քրեական դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող) անձանց նկատմամբ և այլն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ինչպես քննության առարկա, այնպես էլ համանման իրավահարաբերություններ կարգավորող այլ նորմերի (9-րդ հոդվածի 2-րդ մաս, 314-րդ հոդված) բովանդակությունից նաև հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցներ դատարանը կիրառում է միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով: Սակայն դատական նիստի սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում՝ այդ կարգի խախտման փաստով պայմանավորված, հարկադրանքի միջոցներ դատարանը կիրառում է իր նախաձեռնությամբ՝ ելնելով դատական նիստի կարգի խախտման հետ կապված հանգամանքների իր հայեցողական գնահատականներից: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում դատական հայեցողությունից դուրս են դատավարական հարկադրանքի վերաբերյալ միջոցները կոնկրետ (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող) անձանց նկատմամբ կիրառելու իրավապայմանները: Մասնավորապես, դատարանի նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ: Դատական տուգանքը կարող է կիրառվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ: Ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախազահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է կիրառել նախազգուշացում, կամ նա կարող է հեռացվել նիստերի դահլիճից: Միաժամանակ, գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել վիճարկվող հոդվածի առաջին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները (գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ ղիմելը), որն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Դատական սանկցիաների վերաբերյալ դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից (314.1-րդ հոդվածի 8-րդ մաս):

Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառելիության հարցում օրենսդիրն առաջնորդվել է անձանց (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց) տարբե-

րակման սկզբունքով, բացառելով դատավարությանը մասնակցող և դատավարական (իրավական) առանձնահատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտների դատախազի, պաշտպանի (փաստաբանի, կողմի ներկայացուցչի) նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելը որպես սանկցիա կիրառելը: Այն ունի իրավական հիմնավորում: Ինչպես դատախազը (գործով պետական մեղադրողը), այնպես էլ պաշտպանը (փաստաբանը, կողմի ներկայացուցիչը) ՀՀ Սահմանադրության 103-րդ, 20-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների, ՀՀ օրենսդրության այլ ակտերի հիմքերով կատարում են սահմանադրաիրավական գործառույթներ՝ կապված համապատասխանաբար՝ դատարանում մեղադրանքի պաշտպանման և անձանց իրավաբանական օգնության տրամադրման հետ, որպիսիք միտված են ինչպես անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման, այնպես էլ վերջինիս հետ շաղկապված՝ անկախ, արդար, անկողմնակալ, մրցակցային արդարադատության իրականացման Սահմանադրությամբ հաստատագրված նպատակների իրագործմանը: Այսպիսով, դատավարության մասնակից հանդիսացող վերոհիշյալ սուբյեկտների իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությունը, համաձայն որի՝ նրանք ենթակա չեն դատարանի կողմից անմիջականորեն կիրառման ենթակա որոշ սանկցիաների (նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք), ուղղակիորեն պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում օրենքով նրանց ունեցած իրավունքների ու պարտականությունների բնույթով:

Ինչ վերաբերում է վիճելի իրավակարգավորման սուբյեկտ հանդիսացող փաստաբանի օգնականի իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությանը, ապա այն մանրամասնված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում: Վերջինիս 23-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավասարեցվում է փաստաբանի կարգավիճակին, որի ինքնությունը հաստատվում է փաստաբանի օգնականի վկայականով՝ տրված ՀՀ փաստաբանների պալատի կողմից («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասեր): Փաստաբանի օգնականը «օգտվում է փաստաբանի բոլոր իրավունքներից» այն բացառություններով, որպիսիք հիմնականում թվարկված են վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասի 1-ից 3-րդ կետերում և միաժամանակ, որոշ բացառություններով, «կրում է բոլոր պարտականությունները», որոնք այդ օրենքով վերապահված են փաստաբանին, այդ թվում՝ փաստաբանի վարքագծի կանոնադրի կանոններով նախատեսված (23-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր): Մասնավորապես, համաձայն տվյալ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ փաստաբանի օգնականը չունի դատավարական բնույթի այնպիսի իրավունքներ,

ինչպիսիք են. «...ստորագրելու և ներկայացնելու հայցադիմումներ, միջնորդություններ, առարկություններ, հայտարարություններ, պատասխաններ, բացարկներ, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև հարցեր տալու քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելիս»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի քննության առարկա վիճելի իրավակարգավորումը նախատեսող նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ փաստաբանի օգնականը քրեադատավարական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ չէ, այսինքն՝ իրավասու չէ առանց փաստաբանի (պաշտպանի) ինքնուրույնաբար իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով փաստաբանին (պաշտպանին) վերագրված դատավարական բնույթի հիմնական գործառույթները: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ օրենսգիրքը (6-րդ հոդվածի 31-րդ կետ) հստակ տարանջատել է «դատավարության մասնակցին» (դատախազ (մեղադրող), քննիչ, հետաքննության մարմին, տուժող, քաղաքացիական հայցվոր, նրանց օրինական ներկայացուցիչներ և ներկայացուցիչներ, կասկածյալ, մեղադրյալ, նրանց օրինական ներկայացուցիչներ, պաշտպան, քաղաքացիական պատասխանող և նրա ներկայացուցիչը)՝ դատավարական հարաբերություններում այդ սուբյեկտին օժտելով որոշակի իրավունքներով ու պարտականություններով:

7. Անդրադառնալով դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումների բողոքարկելիության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին դրա համապատասխանության գնահատման համատեքստում:

Ինչպես հետևում է վերոհիշյալ նորմի բովանդակությունից, դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դրանք բողոքարկելի չեն, բացառությամբ՝ տուգանք կիրառելու մասին որոշման, որը կարող է բողոքարկվել եռօրյա ժամկետում:

Համադրելով հիշյալ նորմը քրեական գործերով դատաքննության փուլում դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կար-

զավորող այլ նորմերի հետ՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել վիճարկվող իրավակարգավորման հիմքում դրված հետևյալ սկզբունքային մոտեցումները.

- սանկցիայի կիրառման որոշումը դատարանը կայացնում է նույն դատական նիստում՝ միջանկյալ դատական ակտով, ընդ որում՝ այդպիսին կայացվում է կամ արձանագրային որոշման (314.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր) կամ առանձին որոշման ձևով (314.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետեր),

- կիրառված որոշ սանկցիաների կամովին չկատարման դեպքում նախատեսված է դրանց հարկադիր կատարման ապահովում (314.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետեր):

Այսպիսով, քննության առարկա նորմով իրավաբանական առանձնահատուկ ուժ է հաղորդված քրեական գործերով դատական նիստի՝ օրենքով սահմանված կարգը պահպանելուն, այն խախտող անձանց պատասխանատվության ենթարկելուն կոչված դատական ակտերին: Այդ առանձնահատկությամբ են պայմանավորված թե՛ այդ ակտերի կայացման և թե՛ կատարման ապահովման գործող ընթացակարգերը: Միջանկյալ դատական այսպիսի ակտերի բողոքարկելիության իրավական սահմանափակ հնարավորությունը պայմանավորված է դատաքննության բնականոն ընթացքը խոչընդոտող ոչ իրավաչափ ու անկանխատեսելի հանգամանքների արագ վերացման և արդար, արդյունավետ, անկողմնակալ, բազմակողմանի ու օբյեկտիվ դատաքննություն իրականացնելու համար օրենքով նախատեսված պայմանների ստեղծման (ապահովման) անհրաժեշտությամբ, որը նաև երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրացնելու համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և նման մեկնաբանման ու դրան համապատասխան կիրառման դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

8. Անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և վերջինիս իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, օրենքով իրացումը երաշխավորելու, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկելիության արդյունավետությունը բարձրացնելու հիմնախնդիրներին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-665, ՄԴՈ-673, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-720, ՄԴՈ-747, ՄԴՈ-752, ՄԴՈ-754, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-780, ՄԴՈ-832, ՄԴՈ-922, ՄԴՈ-936 և այլն): Այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով հատկապես սույն գործով քննության առարկա հարցադրումներից, սկզբունքորեն հանգեց-

նում են իրավահամակարգային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

- դատական ակտերի բողոքարկումն անձի խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխավորման, ինչպես նաև արդար դատաքննության իրականացման խնդրում առանձնահատուկ ինստիտուտ է,

- բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով իրականացնել արդարադատության նպատակները,

- օրենքով նախատեսված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը (գործով ըստ էության կայացված ակտերը, ինչպես նաև օրենքով թվարկված միջանկյալ ակտերը),

- բողոքարկելի են միջանկյալ դատական այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացումը, մինչդեռ բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը,

- սահմանված են դատական ակտերը վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների հիման վրա վերանայելու իրավասություն ունեցող դատարանները, ընթացակարգերը և արդյունքում կայացվող որոշումները,

- օրենքով սահմանված են դատական ակտերի բողոքարկման հիմքերը, այդ թվում՝ դատական սխալի հիմքով,

- գործով ըստ էության կայացված դատական ակտի բեկանման (վերանայման) հիմք կարող է հանդիսանալ ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումը, որն ազդել է գործի ելքի վրա (հանգեցրել է գործի սխալ լուծմանը), մասնավորապես՝ խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, խախտել է կողմերի դատավարական իրավունքները, հանգեցրել է արդարադատության սկզբունքների խախտմանը:

Միաժամանակ, ընդհանրացնելով դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձը՝ սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգային այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

- մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներն ըստ էության քննության առնելու և դրանց լուծում տալու համար արդյունավետ ընթացակարգերի նախատեսումը, այդ թվում խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը,

- բողոքների ընդունման և քննության ընթացակարգերի դիտարկումն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում:

Վերոհիշյալ իրավաչափ նպատակների իրացման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է միջազգային իրավակիրառական պրակտիկայի զարգացման այն միտումը, համաձայն որի՝ առկա է միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի հասցնելու և դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալու ընդհանուր միտում:

Եվրոպական միության շրջանակներում հաստատագրված իրավական պրակտիկան վկայում է, որ դատական նիստի կարգը խախտելու հիմքով փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման հարցը լուծում է ոչ թե դատարանն իր հայեցողությամբ, այլ վերջինիս ներկայացմամբ՝ փաստաբանական կառավարման համապատասխան մարմինը:

9. Այսպիսով, վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, գնահատելով սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում օրենսդրական, այդ թվում՝ դատական բողոքարկման իրավունքի սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համաչափ են հիշյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես փաստաբանի, այնպես էլ վերջինիս օգնականի կարգավիճակն իր իրավական բովանդակությամբ, իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի այդ կարգավիճակը բնորոշող իրավական ակտերի համակցության մեջ՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորման գերակա անհրաժեշտությունը: Սահմանադրաիրավական այսպիսի դիրքորոշմամբ և համարժեք կիրառման դեպքերում վեճի առարկա իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցի:

Այլ է խնդիրը, ինչպես վկայում են գործում առկա նյութերը, թե ինչպե՞ս են մեկնաբանվել ու կիրառվել վիճարկվող և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերը կոնկրետ գործով, տվյալ անձի (փաստաբանի օգնականի) նկատմամբ և փաստական ինչպիսի՞ հանգամանքների առկայությամբ: Դրանց ըստ էության քննությունն ու իրավա-

գնահատումն ընդհանուր իրավասության դատարանների և, մասնավորապես, վճռաբեկ բողոքի շրջանակներում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական իրավասության խնդիրն է:

Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 18.02.2015թ. Ն/142 գրությամբ ներկայացված գիտավերլուծական կենտրոնի եզրահանգումն առ այն, որ քննության առարկա գործի շրջանակներում «... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից վիճահարույց չէ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24 փետրվարի 2015 թվականի
ՄԴՈ-1191



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ԴՎԻՆ ԻՍԱՆՅԱՆՍԻ, ՌՈՒԴՈՒՑ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ, ՄԱԳՐԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ, ԱՐԱՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ,
ԽԱԶԱՏՈՒՐ ՄԱՐՈԶՅԱՆԻ ԴԻՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 154-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 158-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա.
Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհան-
նիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողներ Դ. Իսանյանսի, Ռ. Հովակիմյանի, Մ. Եղիազարյանի և Ա.
Սարգսյանի ներկայացուցիչ Ա. Զեյնալյանի,
դիմողներ Ա. Սարգսյանի, Խ. Մարոզյանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-
րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(76)2015
113

հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիագարյանի, Արամ Սարգսյանի, Խաչատուր Մարոզյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի և 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիագարյանի, Արամ Սարգսյանի, Խաչատուր Մարոզյանի համապատասխանաբար՝ 09.07.2014թ., 26.09.2014թ. և 27.12.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 09.12.2014թ. ՍԴԱՌ-70 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացիներ Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիագարյանի, Արամ Սարգսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի և 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացի Արա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը միավորվել են:

Սահմանադրական դատարանի 20.01.2015թ. ՍԴԱՌ-1 աշխատակարգային որոշմամբ միավորվել են «Քաղաքացի Խաչատուր Մարոզյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիագարյանի, Արամ Սարգսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի և 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը:

Ուսումնասիրելով միավորված գործով զեկուցողների գրավոր հաղորդումները, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ֆիզիկական և իրավաբանական անձինք վճարեկ բողոք կարող են բերել միայն փաստաբանի միջոցով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Վճարեկ բողոքին կցվում են նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները, վճարեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունվելուց ի վեր դրա 154-րդ հոդվածի 4-րդ մասում և 158-րդ հոդվածի 5-րդ մասում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2.1. Դվին Իսանյանսի դիմումը

Ոստիկանությունը 20.11.2013թ. «Վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին» հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ դիմողի:

Դիմողի անունից 09.01.2014թ. «ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի՝ 20.11.2013թ. Դվին Իսանյանսին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցը մերժելու, կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու և ոստիկանների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին» ձևակերպմամբ հակընդդեմ հայց է ներկայացվել Վարչական դատարան ընդդեմ Ոստիկանության:

Վարչական դատարանը 20.01.2014թ. «Հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ մերժել է վարույթ ընդունել հակընդդեմ հայցը, ինչը բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Վերջինս իր՝ 24.02.2014թ. «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ մերժել է քննության ընդունել վերաքննիչ բողոքը:

Դիմողն անձամբ ներկայացրել է վճռաբեկ բողոք, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.03.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքն այն պատճառաբանությամբ, որ բողոքին կից չի ներկայացվել բողոքի էլեկտրոնային տարբերակը և փաստաբանի արտոնագիրը: Դիմողին տրվել է մեկամսյա ժամկետ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 29.05.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը քննել՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.03.2014 թվականի որոշմամբ Դվին Իսանյանսի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Դվին Իսանյանսը վերոնշյալ որոշմամբ արձանագրված սխալները վերացրել է մասնակի, մասնավորապես՝ վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, ինչպես նաև վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել իր ներկայացուցչի՝ սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը), միաժամանակ բողոք բերած անձը կրկին ներկայացրած վճռաբեկ բողոքում դարձյալ բավարար չի նշել, թե Վերաքննիչ դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն է խախտել կամ սխալ կիրառել և բողոքում չի հիմնավորել գործի էլքի վրա դրանց ազդեցությունը և կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է»:

2.2. Մագդա Եղիազարյանի դիմումը

Մագդա Եղիազարյանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ հայցադիմումում թույլ տրված խախտումը վերացնելու՝ հայցը ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու համար:

Վարչական դատարանը միջնորդությունն ու հայցադիմումի ընդունումը մերժել է:

Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը նույնպես մերժվել է:

Դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/1178/05/13 վարչական գործով 05.03.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է դիմողի բողոքն այն պատճառաբանությամբ, որ դիմումին կից ներկայացված չեն փաստաբանի լիազորագիրը և բողոքի էլեկտրոնային տարբերակը: Դիմողին մեկամսյա ժամկետ է տրվել սխալները

վերացնելու և դիմումը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 14.05.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը քննել՝ հետևյալ պատճառաբանությամբ. «...Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.03.2014 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 26.11.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Մագդա Եղիագարյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է. միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Մագդա Եղիագարյանի ներկայացուցիչը, չվերացնելով որոշմամբ արձանագրված սխալները, այն է՝ վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, և կրկին նույն հիմքով է ներկայացրել վճռաբեկ բողոքը, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել»:

2.3. Արամ Մարգարյանի դիմումը

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի թիվ ՎԴ3/0222/05/13 վարչական գործով 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչն իր անձնական հասցեից էլեկտրոնային ստորագրությամբ (էլեկտրոնային փաստաթուղթ, էլեկտրոնային տարբերակ) 09.01.2014թ. էլեկտրոնային փոստով վճռաբեկ բողոք է առաքել Վճռաբեկ դատարան, Վարչական վերաքննիչ դատարան և պատասխանողին: Այն նույն օրը մուտքագրվել է հասցեատերերի էլեկտրոնային հասցեներին: Վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարից 10.01.2014թ. ստացվել է թիվ ԴԴ6-Ե-33 գրությունը, որով վերջինս ընդունել է վճռաբեկ բողոքն էլեկտրոնային փոստով 09.01.2014 թվականին ստացված լինելու փաստը: Գրության մեջ նշվել է. «... ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն վարչական գործերով դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքով, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով էլեկտրոնային դատավարության ձև սահմանված չէ, և նույն օրենսգրքի 118.4-րդ և 118.5-րդ հոդվածների կանոնակարգումների տրամաբանության համաձայն վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոքը պետք է ներկայացվի բնօրինակով:... Վերոգրյալի հիման վրա հայտնում եմ, որ Դուք կարող եք Ձեր վճռաբեկ բողոքը ներկայացնել նշված իրավանքների պահանջների պահպանմամբ, ուստի վերը նշված էլեկտրոնային փաստաթուղթ ֆայլը չի կարող համարվել որպես ՀՀ վճռաբեկ դատարանում մուտքագրված վճռաբեկ բողոք»:

Դիմողի անունից վերը նշված վճռաբեկ բողոքը ներկայացվել է փաս-

տաթղթային տարբերակով, ինչի արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, մատնանշելով, որ դիմողը բողոքին կից չի ներկայացրել բողոքի էլեկտրոնային տարբերակը և սահմանված կարգով ձևակերպված փաստաբանի լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը): Դիմողին տրվել է մեկամսյա ժամկետ սխալները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդունել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ հետևյալ պատճառաբանությամբ. «...Այսպիսով, կրկին օրենքի պահանջների խախտմամբ բողոք ներկայացնելու դեպքում սխալները շտկելու համար վերստին ժամկետ սահմանելը կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:

Նկատի ունենալով, որ կրկին նույն հիմքով ներկայացված բողոքում սխալները չշտկելու պարագայում չեն վերացվում բողոքը քննության առնելու խոչընդոտները, իսկ մյուս կողմից տվյալ գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման դեպքերում կրկին ներկայացված բողոքն անհրաժեշտ է թողնել առանց քննության՝ նույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելու հիմքով:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.03.2014 թվականի որոշմամբ որպես Արամ Սարգսյանի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Արամ Սարգսյանի ներկայացուցիչը չվերացնելով որոշմամբ արձանագրված սխալը, վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, ինչպես նաև վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել իր ներկայացուցչի՝ սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը) և կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է»:

2.4. Ռուդոլֆ Հովակիմյանի դիմումը

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը 17.12.2013թ. «Վճարման կարգադրություն արձակելու մասին» երկու տարբեր հայցադիմումներով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ դիմողի՝ 50.000.00 ՀՀ դրամի չափով վճարման կարգադրություն արձակելու պահանջով, որոնց կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը համապատասխանաբար 19.02.2014թ. և

25.02.2014թ. արձակել է վճարման կարգադրություններ:

Նշված վճարման կարգադրությունների կապակցությամբ դիմողի անունից 21.03.2014թ. ներկայացվել են երկու տարբեր հակընդդեմ հայցադիմումներ, որոնցով պահանջվել է նշանակված և հնգապատկված տուգանքը բռնագանձելուն ուղղված՝ ՀՀ կառավարությանն առընթեր ճանապարհային ոստիկանության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչել և հայցադիմումը մերժել:

Նշված հակընդդեմ հայցադիմումների կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը համապատասխանաբար՝ 28.03.2014թ. և 02.04.2014թ. կայացրել է՝ «Վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու, հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին» և «Վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու և հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշումներ, որոնք բողոքարկվել են ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Այդ բողոքներից մեկով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 22.04.2014թ. կայացրել է «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, իսկ մյուսով 09.06.2014թ. կայացրել է «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշում:

Վարչական վերաքննիչ դատարանի 22.04.2014թ. «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը բողոքարկվել է ՀՀ վճարեկ դատարան, որն իր՝ 04.06.2014թ. «Վճարեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճարեկ բողոքը՝ հետևյալ պատճառաբանությամբ, որ. «...ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճարեկ բողոքը ստորագրում են բողոք բերողը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք վճարեկ բողոք կարող են բերել միայն փաստաբանի միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճարեկ բողոքն ուղարկվում է վճարեկ դատարան, իսկ բողոքի պատճենը՝ վերաքննիչ դատարան ու դատավարության մասնակիցներին:

Տվյալ դեպքում բողոք բերած անձը բողոքին կից չի ներկայացրել վճարեկ բողոքի պատճենը Ծառայությանն ուղարկված լինելու վերաբերյալ ապացույց...»: Դիմողին տրվել է մեկամսյա ժամկետ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վարչական վերաքննիչ դատարանի 09.06.2014թ. «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը նույնպես բողոքարկվել է ՀՀ վճարեկ դատարան, որն իր՝ 23.07.2014թ. «Վճարեկ բողոքը վերադարձնելու մասին»

որոշմամբ վերադարձրել է վճարել բողոքն՝ հետևյալ պատճառաբանությամբ. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճարել բողոքն ստորագրում են բողոք բերողը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

Վճարել դատարանն արձանագրում է, որ թեև բողոքը բերվել է Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցիչ (հիմք 18.03. 2014 թվականին տրված լիազորագիրը, գ.թ. 21) Արտակ Ջեյնալյանի կողմից, սակայն գործում առկա չէ Արտակ Ջեյնալյանի՝ փաստաբան լինելու վերաբերյալ ապացույց, ուստի բողոք բերած անձը, խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, վճարել բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, այսինքն՝ բողոքին կից չի ներկայացրել սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը)»: Դիմողին տրվել է ժամկետ դիմումը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճարել բողոքի կապակցությամբ ՀՀ վճարել դատարանն իր՝ 03.09.2014թ. «Վճարել բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ առանց քննության է թողել վճարել բողոքը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Տվյալ դեպքում Վճարել դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.07.2014 թվականի որոշմամբ Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցչի բերած վճարել բողոքը վերադարձվել է և միաժամանակ սահմանվել է ժամկետ վճարել բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցիչը չի վերացրել որոշմամբ արձանագրված սխալները, մասնավորապես՝ Ռուդոլֆ Հովակիմյանը կրկին վճարել բողոքը չի բերել փաստաբանի միջոցով. թեև վճարել բողոքը բերվել է Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանի կողմից (հիմք՝ 18.03.2014 թվականին տրված լիազորագիրը, գ.թ. 20), սակայն գործում առկա չէ Արտակ Ջեյնալյանի՝ փաստաբան լինելու վերաբերյալ որևէ ապացույց: Այսինքն՝ Ռուդոլֆ Հովակիմյանը կրկին նույն հիմքով ներկայացրել է վճարել բողոք, որի վերաբերյալ Վճարել դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է:

Նման պայմաններում Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքը պետք է թողնել առանց քննության...»:

2.5. Արա Սարգսյանի դիմումը

Երևանի քաղաքապետը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Արա Սարգսյանից 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով վճարման կարգադրություն արձակելու պա-

հանջով, ինչի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը 01.02.2012թ. արձակել է վճարման կարգադրություն:

Նշված վճարման կարգադրության կապակցությամբ դիմողը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց՝ Երևանի քաղաքապետի 26.10.2011թ. թիվ Վ-35/4 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Նշված հակընդդեմ հայցադիմումի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը 21.02.2013թ. կայացրել է «Վճարման կարգադրությունից հայցային վարույթի անցում կատարելու, հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում:

Կրկին ներկայացված հակընդդեմ հայցադիմումի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանն իր՝ 03.07.2013թ. կայացրած վճռով հայցը մերժել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարել:

Նշված վճռի դեմ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 24.01.2014թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վճիռը բեկանել և փոփոխել է. հակընդդեմ հայցի առնչությամբ գործի վարույթը կարճվել է, իսկ Երևանի քաղաքապետարանի հայցը՝ բավարարվել:

Նշված որոշման դեմ դիմողի կողմից բերված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 12.03.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, հետևյալ պատճառաբանությամբ. «Տվյալ դեպքում բողոք բերած անձը, ..., վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»: Դիմողին տրվել է տասնհինգօրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 14.05.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ առանց քննության է թողել վճռաբեկ բողոքն այն պատճառաբանությամբ, որ. «... Արա Սարգսյանը ... վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»:

2.6. Խաչատուր Մարոզյանի դիմումը

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Խաչատուր Մարոզյանից 2.000.000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով վճարման կարգադրություն արձակելու պահանջով:

Խաչատուր Մարոզյանը հակընդդեմ հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ 14.05.2012թ. թիվ 1104074 ակտը և դրա հիման վրա ՀՀ կառա-

վարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչության 12.06.2012 թվականի թիվ 194186 որոշումն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու պահանջով:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 01.05.2012թ. որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցել է հայցային վարույթի և հակընդդեմ հայցադիմումը վերադարձրել, իսկ իր՝ 28.02.2014թ. վճռով բավարարել է ներկայացված հայցը:

Դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 27.05.2014թ. որոշմամբ մերժել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը:

Դիմողի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը 09.07.2014թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, որով վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, հետևյալ պատճառաբանությամբ. «... բողոք բերած անձը ... վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»: Դիմողին տրվել է տասնհինգօրյա ժամկետ՝ որոշումն ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ սույն միավորված գործով դիմողների փաստարկները հանգում են նրան, որ օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1, 18, 19 և 20-րդ հոդվածներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, քանի որ բացառում է ֆիզիկական և իրավաբանական անձի կողմից իր անունից անձամբ կամ իր ընտրած անձի միջոցով վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը:

Արձանագրելով, որ նախկինում անձը կարող էր առանց որևէ խոչընդոտի վճռաբեկության կարգով բողոքարկել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերը, դիմողներն այն համոզմունքն են հայտնում, որ ներկայումս վերացվել է ՀՀ վճռաբեկ դատարան անմիջապես դիմելու կարգը՝ սահմանափակելով իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները:

Իրենց պահանջը հիմնավորելու համար դիմողները նշում են, որ ՀՀ վճռաբեկ դատարանին բողոքարկման ենթակա ակտերը բացառապես փաստաբանի միջոցով ներկայացնելու օրենսդրական արգելքի պայմաններում անհրաժեշտ է օրենքով կարգավորել փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որևէ մեխանիզմ՝ անկախ կողմի նյութական դրությունից:

Դիմողները բարձրացնում են նաև այն հիմնահարցը, որ փաստաբանի

մատուցած ծառայություններից օգտվելու համար ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ, ինչը հաճախ անհասանելի է դարձնում այդ ծառայություններից օգտվելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ դիմողների փաստարկները հանգում են նրան, որ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1, 3, 18 և 19-րդ հոդվածներին:

Իրենց պահանջը հիմնավորելու համար դիմողները նշում են, որ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող հստակության, ճշգրտության և կանխատեսելիության որակները: Այն ձևակերպված է անորոշ, քանի որ պարզ չէ, թե ինչ էլեկտրոնային տարբերակ պետք է կցվի վճարեկ բողոքին և ինչ էլեկտրոնային կրիչով: Դիմողները գտնում են նաև, որ նշված դրույթն անիրագործելի է դարձնում դատական ակտերի վիճարկումը վճարեկ դատարան այն անձանց համար, որոնց մատչելի չեն համակարգիչը, սպիչը, էլեկտրոնային կրիչները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի այն դրույթի առնչությամբ, որը վերաբերում է բողոքի պատճենը գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները վճարեկ բողոքին կցելու պարտականությանը, դիմողները գտնում են, որ նշված դրույթում «ուղարկել» եզրույթին իրավակիրառական պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որը բացառում է վճարեկ բողոքն էլեկտրոնային ստորագրությամբ էլեկտրոնային փոստով գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելը: Նշված տեսակետը հիմնավորելու համար դիմողները վկայակոչում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վերաբերյալ ՄԴՈ-722 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, փաստարկում է, որ վճարեկ դատարանում դիմողի շահերը որակավորում ունեցող փաստաբանի կողմից ներկայացվելու պահանջը չի կարող ինքնին հա-

մարվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին հակասող, և այդպիսի ընթացակարգ սահմանելն արդարացված է ավելի գրագետ բողոքներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Հարցին անդրադառնալով փաստաբանի և հավատարմագրված փաստաբանի միջև նմանությունների և տարբերությունների տեսանկյունից և վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-765 որոշումը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, և, մասնավորապես, այդ հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է բողոքների կազմումը, պատասխանողն ընդգծում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով էականորեն ընդլայնվեցին անվճար իրավաբանական օգնության և անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակները: Ըստ պատասխանողի՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում նշված կատեգորիաների մեջ չընդգրկված ցանկացած անվճարունակ ֆիզիկական անձ ևս կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնությունից:

Հարցին անդրադառնալով միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափության տեսանկյունից՝ պատասխանողն արձանագրում է, որ այդպիսի միջոցի ընտրությունը պայմանավորված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի խստացումով, ինչը պահանջում է անհրաժեշտ չափով իրավական գիտելիքներ:

Ամփոփելով՝ պատասխանողը գտնում է, որ նախ՝ վճռաբեկ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու՝ դատավարության մասնակցի հնարավորությունը, ինչպես նաև դատավարության կողմերի իրավահավասարությունը կախման մեջ չի դրվել անձի ֆինանսական հնարավորություններից, երկրորդ՝ ի տարբերություն հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի, բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու վերաբերյալ իրավակարգավորումը որևէ խտրականություն չի առաջացնում փաստաբանների միջև, երրորդ՝ խնդրո առարկա իրավապայմանը համաչափ է հետապնդվող նպատակին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ պատասխանողը փաստարկում է, որ վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներն ինքնանպատակ չեն, այլ իրենց տրամաբանության մեջ ուղղված են վճռաբեկ դատարանի գործառնությունների արդյունավետ իրականացմանը և թելադրված են գիտության ու տեխնիկայի զարգացմամբ:

Վկայակոչելով «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը՝ պատասխանողը գտնում է, որ էլեկտրոնային կրիչը տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը պահպանելու և փոխանցելու համար պիտանի կրիչի

ցանկացած տեսակ է, և դրա տեսակներն օրենսդրությամբ չեն կոնկրետացվել՝ նպատակ հետապնդելով տալ ընտրության լայն հնարավորություն և նվազագույնի հասցնել էլեկտրոնային կրիչի ձեռքբերման կապակցությամբ կատարվելիք ծախսերը:

Պատասխանողը հիմնավոր չի համարում դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումն էլեկտրոնային կրիչ ձեռք բերելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորելը, քանի որ, ըստ պատասխանողի, վճարելի բողոքի ներկայացումն ինքնին բողոքաբերից որոշակի ծախսեր է պահանջում՝ կապված, ի թիվս այլնի, պետական տուրքի և բողոքի պատճենները գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու հետ: Իսկ ֆինանսապես խոցելի վիճակում գտնվող անձանց համար օրենսդիրը նախատեսել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, որը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի ուժով, ի թիվս այլնի, ներառում է բողոքների կազմումը:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով և 158-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավական պահանջների նշանակությունը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքների երաշխավորվածությունը և լիարժեք իրացման անհրաժեշտ կառուցակարգերի ապահովումը,

- ՀՀ վճարելի դատարան բացառապես փաստաբանի միջոցով վճարելի բողոք բերելու օրենսդրական կարգավորման համակարգային տրամաբանությունն ու իրավաչափ նշանակությունը՝ հաշվի առնելով նաև փաստաբանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի էության ու բովանդակության, դրա օրենսդրական կարգավորման արդյունավետության ու սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-765 և ՄԴՈ-833 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները:

6. Վերոհիշյալ որոշումներում, տվյալ գործերով քննության առարկա հարցերը դիտարկելով նաև դատարանի մատչելիության, դատական

պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների օրենսդրական լիարժեք և ամբողջական կարգավորման անհրաժեշտության համատեքստում, ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին, քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն և անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը» (ՄԴՈ-765),

բ) «Ինչ վերաբերում է դատավարության մասնակիցների համար օրենքի առջև հավասարության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելուն, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ..., սահմանադրական դատարանը գտնում է, որ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաև հավասարությունը դատավարության մասնակիցների միջև՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով» (ՄԴՈ-765),

գ) «... հաշվի առնելով նշված ինստիտուտի գործունեության ձեռնարկատիրական, մենաշնորհային բնույթը, դրա վրա հիմնված հավատարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, սահմանադրական դատարան, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիմելու համար պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պահանջը, կարելի է փաստել, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտն իր գոյությամբ սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարանի, այլ նաև սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով» (ՄԴՈ-765),

դ) «...պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարանի դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով: Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարանի ինստիտու-

տը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից» (ՄԴՈ-765),

ե) «... վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ...՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային աստիճաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը» (ՄԴՈ-833):

Վերահաստատելով ՄԴՈ-765, ՄԴՈ-833 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները և արձանագրելով, որ դրանք անտեսվել են հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված իրավական դիրքորոշումները վերաբերելի են նաև սույն գործի առնչությամբ:

7. Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարություն գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոք-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2(76)2015

քարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի նախատեսումը լիարժեքորեն կայացած և գործուն փաստաբանական համակարգի պարագայում կոչված կլինի նպաստելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը: Նման մոտեցման պարագայում ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս առյանում ևս՝ ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բողոքների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել անձի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների անտեսմամբ կամ անհամաչափ սահմանափակմամբ: Այսինքն, նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանն իր ՄԴՈ-1167 որոշման մեջ ամրագրել է. «... ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»: Նշվածի համատեքստում սահմանադրական դատարանն էական է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ, օրինակ, սահմանադրական արդարադատության մարմնում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ և (կամ) ներկայացուցիչների միջոցով:

8. Վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդրին սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել նաև վարչադատավարական օրենսդրության զարգացման համատեքստում: Մինչև ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի ընդունումը ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքով ՀՀ վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոքը միայն փաստաբանի միջոցով բերելու պարտադիր պահանջ առկա չէր, այսինքն՝ նախատեսված էր վճռաբեկ բողոքն անմիջականորեն ներկայացնելու կարգ: Մինչդեռ վիճարկվող դրույթը ոչ միայն

